

A 12.00.02
U-25

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՆՈՐԱ ՎԱԶԱԳԱՆԻ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺԻ ԵՎ

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՀԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.02 – Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2009

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

САРКИСЯН НОРА ВАЧАГАНОВНА

**СООТНОШЕНИЕ СВОБОДНОГО ПЕРЕДВИЖЕНИЯ
ТОВАРОВ И ЗАЩИТЫ ИНТЕРЕСОВ ПОТРЕБИТЕЛЕЙ В
ЕВРОПЕЙСКОМ СОЮЗЕ**

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени
кандидата юридических наук по специальности:
12.00.02. – Публичное право (конституционное, административное,
финансовое, экологическое, европейское право,
государственное управление)

Ереван 2009

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ա.Գ. Ղազիճյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ **Ա.Ս. Հայկյան**


իրավաբանական գիտությունների թեկնածու **Ա.Ա. Գեղամյան**

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ Սահմանադրական իրավունքի կենտրոն

Պաշտպանությունը կայանալու է 2009թ. հունիսի 26-ին ժամը 14⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՎ-ի 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք.Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 25 մայիսի 2009թ.

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ  **Ա.Գ. Վաղարշյան**

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: кандидат юридических наук, доцент **А. Г. Казинян**


Официальные оппоненты: доктор юридический наук, доцент **А.М. Айкянц**
кандидат юридических наук **А.А. Гегамян**

Ведущая организация: Центр Конституционного права РА

Защита состоится 26 июня 2009 г. в 14⁰⁰ часов на заседании Специализированного совета ВАК-а 001 при Ереванском государственном университете (0025, г.Ереван, ул. Алека Манукиана 1)

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 26 мая 2009 г.

Ученый секретарь специализированного совета, кандидат юридических наук, доцент  **А.Г. Вагаршян**



2546-2009

Թեմայի արդիականությունը: Ընդհանուր շուկայի ձևավորումը հանդիսանում է Եվրոպական Միության առանցքային նպատակներից, նրա հաջողության ու կայուն զարգացման գրավականներից մեկը: Հետևելով Եվրոպական Ընկերակցության հիմնադիր պայմանագրի սկզբունքներին՝ Ընկերակցության իրավունքը ազատակամացրել է ապրանքների շուկան՝ նպաստելով սպառողների ընտրության համար աննախադեպ հնարավորությունների ստեղծմանը: Ապրանքների հսկայական հոսքը Եվրոպական շուկա, իր առավելություններով հանդերձ, Ընկերակցության և դրա անդամ պետությունների օրակարգում դրեց նաև մի շարք լուրջ խնդիրներ՝ կապված սպառողների արդյունավետ պաշտպանության հետ: Եթե կարճաժամկետ կտրվածքով, առևտրի խրախուսման արդյունքում ապրանքների մեծ տեսականու և ողջամիտ գների առկայությունը սպառողների աչքերում ստեղծում է տնտեսական շահեկանության պատրանք, ապա երկարաժամկետ առումով՝ ապրանքների անվերահսկելի հոսքը կարող է հանգեցնել առողջապահական և տնտեսական մեծ կորուստների՝ անմիջական անդրադարձ ունենալով սպառողների վրա: Այդ իսկ պատճառով էլ, պատահական չէ, որ սպառողների պաշտպանության և ներքին շուկայի քաղաքականությունների միջև կապը Ընկերակցությունում պատմականորեն խնդրահարույց է եղել:

Ընկերակցության առանցքային սկզբունքներից մեկի՝ ապրանքների ազատ տեղաշարժի, և մյուս կողմից՝ ազգային քաղաքականության տեսանկյունից ոչ պակաս կարևոր ոլորտներից մեկի՝ սպառողների պաշտպանության միջև հակասությունների հիմքում ընկած են սպառողներին տրամադրվելիք պաշտպանության օպտիմալ մակարդակի վերաբերյալ Ընկերակցության և անդամ պետությունների մոտեցումների հայեցակարգային տարբերությունները: Մինչդեռ ապրանքների ազատ տեղաշարժի և սպառողների շահերի միջև ողջամիտ հավասակշռության բացակայությունը կարող է հարցականի տակ դնել ընդհանրապես Ընկերակցությունում ընդհանուր շուկայի գոյության նպատակահարմարությունը: Այդ իսկ պատճառով էլ ապրանքների ազատ տեղաշարժի և սպառողների պաշտպանության բնագավառում Ընկերակցության քաղաքականության հարաբերակցության հարցերը գտնվում են Եվրոպական իրավունքի տեսության բանավեճային հիմնահարցերի շարքում, ինչը վկայում է ընտրված թեմայի արդիականության մասին:

Սպառողների պաշտպանությանն ուղղված օրենսդրության և ազատ առևտրի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովումը լուրջ խնդիր է հանդիսանում ոչ միայն Եվրոպական միության անդամ երկրների շրջանակում, այլ նաև այն բոլոր երկրներում, որոնք փորձում են գնալ ազատ առևտրի խրախուսման ճանապարհով՝ կնքելով ազատ առևտրի համաձայնագրեր: Հայաստանի Հանրապետության անդամակցությունը Առևտրի համաշխարհային կազմակերպությանը և մասնակցությունը միջազգային առևտրին, դրա արդյունքում ապրանքաշրջանառության ակտիվացումը նոր մարտահրավերներ են նետում նաև ՀՀ առջև՝ սպառողին անորակ, կյանքի և առողջության համար ռիսկեր պարունակող ապրանքների ներմուծումից պաշտպանելուն ուղղված գործունե մեխանիզմներ ապահովելու առումով: Ինչպես Եվրոպական միության, այնպես էլ բազմաթիվ երկրների հետ Հայաստանի սերտ առևտրային հարաբերությունները, դրանց հիմքում ընկած պայմանագրերում ապրանքների ազատ տեղաշարժի պայմանավորումը գրեթե նույն սկզբունքներով, ինչ և նախատես-

ված է Եվրոպական Ընկերակցության հիմնադիր պայմանագրում, Հայաստանի Հանրապետության համար ևս առավել քան արդիական են դարձնում ապրանքների տեղաշարժի ազատության և սպառողների շահերի հավասարակշռման հարցում Եվրոպական Ընկերակցությունների դատարանի (ստորև՝ Ընկերակցությունների դատարան) նախադեպային իրավունքի և Եվրոպական միության մոտեցումների ուսումնասիրությունը: Նման ուսումնասիրությունները խիստ արժեքավոր են նաև Եվրոպական միության հետ ՀՀ անխափան և բարիդրացիական առևտրային հարաբերությունների զարգացման համար՝ հատկապես ԵՄ «Արևելյան գործընկերության» նոր ծրագրի շրջանակներում, որը նախատեսում է Եվրոպական հարևանության քաղաքականության երկրների հետ ազատ առևտրի ռեժիմի հաստատում գրեթե նույն սկզբունքներով, որոնք գործում են Եվրոպական ընդհանուր շուկայում:

Ավելին, ՀՀ տնտեսության մեջ տեսակարար առավել մեծ կշիռ են կազմում ներմուծումները, այդ թվում՝ սպառողական օգտագործման համար նախատեսված ապրանքների ներմուծումները: Այս պայմաններում, առաջնային է դառնում սպառողների պաշտպանության բավարար երաշխիքներ ստեղծող գործուն օրենսդրության առկայությունը, ներմուծվող ապրանքի որակի և անվտանգության երաշխավորման մեխանիզմների անհրաժեշտությունը, այնպես, որ դրանք մի կողմից համահունչ լինեն միջազգայնորեն ընդունելի մոտեցումներին և չվերածվեն ազատ առևտրի անհարկի խոչընդոտների, և մյուս կողմից էլ՝ արագ և արդյունավետորեն արձագանքեն ազգային սպառողների շահերի պաշտպանության հիմնախնդիրներին:

Ավելին, ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը՝ որպես կառավարության գործունեության առանձին ուղղություն հատուկ տեղ է հատկացնում սպառողների շահերի պաշտպանության արդյունավետ համակարգի ապահովմանը: Կարծում ենք, որ սույն ատենախոսության մեջ բարձրացված հարցերը ևս հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի Հանրապետությունում սպառողների պաշտպանության բնագավառում Եվրոպական մոտեցումներին համահունչ քաղաքականություն զարգացնելու առումով:

Հիշյալ հանգամանքները պայմանավորում են ատենախոսության թեմայի արդիականությունը նաև պրակտիկայում, հատկապես՝ ՀՀ շուկա ապրանքների մուտքը սպառողների շահերի վկայակոչմամբ սահմանափակելու չափանիշների ձևավորման, սպառողների պաշտպանության բնագավառում Եվրոպական մոտեցումներին համահունչ օրենսդրություն զարգացնելու հարցում:

Թեմայի գիտական հետազոտման աստիճանը: Ապրանքների ազատ տեղաշարժի հիմնախնդիրները, ընկած լինելով Եվրոպական Ընկերակցության և Միության կայացման հիմքում, լայն հետազոտության առարկա են հանդիսացել մասնավորապես արևմտյան իրավաբանական գրականության մեջ: Այս տեսանկյունից հատկապես արժեքավոր բազա են հանդիսանում Եվրոպական իրավաբանական դպրոցի ներկայացուցիչների գիտական աշխատությունները, որոնք գտնվելով Եվրոպական ինտելեկտուալ գործընթացների և Եվրոպական իրավունքի ձևավորման ակունքներում իրենց գիտական աշխատություններով նպաստել են այդ իրավունքի դոկտրինալ զարգացմանը: Սպառողների պաշտպանությունը՝ ավելի ուշ ներթափանցելով Ընկերակցության իրավասությունների ոլորտ, արևմտյան գիտական մտքի կողմից համեմատաբար սակավաթիվ գիտական հետազոտությունների առարկա է դարձվել: Այս

ոլորտում առավելապես գերակշռում են սպառողների պաշտպանությանն առնչվող առանձին հարցերի շուրջ իրականացված գիտական վերլուծություններն ու հոդվածները, քան թե համալիր ուսումնական ձեռնարկները:

Ատենախոսության շրջանակներում ուսումնասիրության է ենթարկվել արտասահմանյան լայնածավալ գրականություն, մենագրություններ ու առանձին հոդվածներ, այդ թվում՝ այնպիսի հեղինակավոր իրավաբանական ամսագրերում, ինչպիսիք են Harvard Law Review, Columbia Journal of European Law, Fordham International Law Journal և այլն, հրապարակված իրավաբան-գիտնականների բավական հազվագյուտ գիտական հոդվածներ, որոնց մշակած տեսություններն ու առաջ քաշած հայեցակարգերը ընկած են Եվրոպական Ընկերակցությունում ապրանքների ազատ տեղաշարժի և սպառողների պաշտպանության քաղաքականությունների հիմքում: Դա հնարավորություն է տվել վեր հանել և համալիր հետազոտության ենթարկել ատենախոսության ուսումնասիրության շրջանակներում բարձրացված հարցերի շուրջ արևմտյան իրավաբանական գիտության մեջ վիճահարույց հիմնախնդիրները և դիտարկել գոյություն ունեցող հայեցակարգերը: Միևնույն ժամանակ լայնորեն օգտագործվել են սպառողի կողմից որոշումների կայացման գործընթացի և նրա վարքագծի ուսումնասիրությունների բնագավառում վարքագծային և նեոկլասիկ տեսությունների հայտնի տեսաբաններ Richard A. Epstein-ի, Colin F. Camerer-ի, Cass R. Sunstein-ի, Richard Thaler-ի, Paul Slovic-ի, Douglas Kysar-ի և այլոց աշխատությունները:

Ատենախոսության շրջանակներում բավական մեծ տեղ է հատկացվել Ընկերակցությունների դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությանը, քանի որ Դատարանը ակտիվ դերակատարում է ունեցել Ընկերակցության նեգատիվ ինտեգրացման հարցում՝ նպաստելով Եվրոպական միությունում ապրանքների ազատ տեղաշարժի ազգային խոչընդոտների վերացմանն ու ազգային հովանավորչական քաղաքականություններին միջամտելուն ուղղված իրավական մեխանիզմների լուրջ համալիրի ձևավորմանը: Ատենախոսության մեջ լայնորեն օգտագործվել են ապրանքների ազատ տեղաշարժի և սպառողների պաշտպանության հարցերին առնչվող Ընկերակցությունների դատարանի վճիռների ժողովածուները և Դատարանի քննության առարկա հանդիսացած առանձին գործերի վերաբերյալ անհատ տեսաբանների մեկնաբանությունները: Ատենախոսության պատրաստման ընթացքում ուսումնասիրության են ենթարկվել նաև մեծաթիվ նորմատիվ ակտեր՝ բանաձևեր, դիրեկտիվներ, կանոնակարգեր, Եվրոպական հանձնաժողովի հաղորդագրություններ, միջազգային պայմանագրեր և այլն:

Չնայած ԵՄ-ում ապրանքների ազատ տեղաշարժի սկզբունքների բացահայտմանը նվիրված արտասահմանյան իրավաբանական մեծաքանակ գրականության առկայությանը, այդուհանդերձ՝ ապրանքների ազատ տեղաշարժը սպառողների պաշտպանության հետ հարաբերակցության համատեքստում գրականության մեջ առանձնակի հետազոտության առարկա չի դարձվել: Այս հարցի շուրջ որոշակի վերլուծություններ են տեղ գտել մասնավորապես հայտնի տեսաբաններ S. Weatherill-ի, ինչպես նաև P. Nebbia-ի ու T. Askham-ի՝ ԵՄ սպառողական իրավունքին ու քաղաքականությանը նվիրված ուսումնական ձեռնարկներում: Ավելին, ԵՄ-ում ապրանքների ազատ տեղաշարժի սկզբունքի բովանդակության զարգացումները Ընկերակցության նախադեպային իրավունքի համատեքստում և դրա հետ սպառողնե-

րի պաշտպանության հարաբերակցության հիմնախնդիրները ուսումնասիրության առարկա չեն դարձվել նաև հայրենական իրավագիտության մեջ:

Չետագոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակը եվրոպական միության ընդհանուր շուկայում ապրանքների տեղաշարժի ազատության, շուկա ապրանքների անսահմանափակ մուտքի պայմանների ստեղծման և դրա համատեքստում սպառողների պաշտպանության քաղաքականությանը ներկայացվող պահանջների վերլուծությունն է: Արդյունքում բացահայտվում են ԸՆԿերակցությունների դատարանի պրակտիկայում և ընդհանրապես՝ ԸՆԿերակցության քաղաքականության մեջ, պատմականորեն ձևավորված այն չափանիշները, որոնց հիման վրա գնահատվում է ապրանքների տեղաշարժի ազատության սահմանափակման թույլատրելիությունը՝ սպառողների շահերի պաշտպանության նկատառումներով: Միևնույն ժամանակ սպառողների պաշտպանության եվրոպական քաղաքականության մոտեցումները համադրելով շուկայում սպառողի իրական վարքագծի ուսումնասիրության հետ՝ ատենախոսությունը նպատակ ունի ցույց տալու, թե որքանով է սպառողն ունակ կատարելու տեղեկացված ու իր պահանջներին համապատասխան ընտրություն ապրանքների լայն տեսականու պայմաններում և արդյունքում՝ ուրվագծելու սպառողների շահերով արդարացվող թույլատրելի պետական միջամտության սահմանները շուկային: Սպառողների պաշտպանության բնագավառում եվրոպական Միությունում պատմականորեն ձևավորված հիմնարար մոտեցումները դիտարկվել են նաև Հայաստանի Հանրապետության առումով՝ ՀՀ իրավական դաշտի վերլուծության և սպառողների շրջանում իրականացված հետազոտության արդյունքների հիման վրա վեր հանելով այն հիմնախնդիրները, որոնք առկա են Հայաստանի Հանրապետությունում՝ սպառողների պաշտպանության բնագավառում ժամանակակից մոտեցումներին համահունչ քաղաքականություն զարգացնելու առումով:

Ատենախոսության նպատակներին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- բացահայտել այն հիմնարար սկզբունքները, որոնց հիման վրա կառուցվել և զարգանում է Միության ընդհանուր շուկայում ապրանքների տեղաշարժի ազատության քաղաքականությունը,
- վեր հանել ԸՆԿերակցությունների դատարանի նախադեպային իրավունքի հիմքում դրված այն սկզբունքները, որոնցով Դատարանը փորձել է հավասարակշռություն ապահովել ապրանքների տեղաշարժի ազատության և սպառողների շահերի պաշտպանության միջև՝ կանխելով անդամ պետությունների կողմից իրենց ներքին շուկաների նկատմամբ պաշտպանողական (պրոտեկցիոնիստական) քաղաքականության դրսևորումները,
- շուկայում սպառողի վարքագծի ուսումնասիրության հիման վրա բացահայտել ապրանքների լայն տեսականու պայմաններում նրա կողմից իր պահանջներին առավելագույնս համապատասխան ընտրություն կատարելու առանձնահատկությունները և դրանով պայմանավորված՝ թույլատրելի պետական միջամտության սահմանները մրցակցային շուկային,
- քննարկել ապրանքների ազատ տեղաշարժի և սպառողների պաշտպանության բնագավառում եվրոպական միության քաղաքականության և իրավունքի

դերն ու ազդեցությունը Հայաստանի Հանրապետության համար՝ որպես միջազգային առևտրի մասնակից և ԵՄ գործընկեր պետություն:

- ապրանքների ազատ տեղաշարժի և սպառողների պաշտպանության հավասարակշռման հարցում ԵՄ-ում ձևավորված մոտեցումների լույսի ներքո դիտարկել այն հիմնախնդիրները, որոնք առկա են ՀՀ-ում սպառողների պաշտպանության արդյունավետ քաղաքականության առումով:

Չետագոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսության հետազոտության օբյեկտը ԵՄ-ում ապրանքների ազատ տեղաշարժի և սպառողների պաշտպանության բնագավառի իրավահարաբերություններն են: Չետագոտության առարկա են հանդիսանում ԸՆԿերակցության ներսում ապրանքների տեղաշարժի ազատության և դրա սահմանափակման սկզբունքները, սպառողների պաշտպանությունը եվրոպական ԸՆԿերակցության իրավասության ոլորտ ներթափանցելու պատմական զարգացման առանձնահատկությունները, սպառողների պաշտպանության օպտիմալ մակարդակի որոշման հարցում եվրոպական ԸՆԿերակցության ու դրա անդամ պետությունների քաղաքականությունների ներդաշնակեցման միտումները, սպառողների շահերի պաշպանությամբ պայմանավորված՝ ապրանքների տեղաշարժի ազատության խոչընդոտների համաչափության գնահատումը և սպառողների պաշտպանության նպատակով մրցակցային շուկային պետական միջամտության սահմանների հարցը:

Ատենախոսության տեսական հիմքը: Ատենախոսական տեսական հիմքը եվրոպական իրավունքի ոլորտի դասական աշխատանքները, մենագրությունները և գիտական հոդվածներն են, որոնք վերաբերում են ԵՄ-ում ապրանքների ազատ տեղաշարժի, շուկա ապրանքների մուտքի սահմանափակումների համաչափության գնահատմանը և մրցակցային շուկայում սպառողների պաշտպանության հիմնախնդիրներին:

Ատենախոսությունը գրելիս հեղինակը հիմնվել է եվրոպական իրավունքի ուսումնասիրության ոլորտում հայտնի իրավաբան գիտնականներ՝ Փ. Նեբբիայի, Թ. Ասքհամի, Ս. Վեգերիլի, Գ. Բուրքայի, Ա. Շվարցի, Լ. Գորմլիի, Ջ. Հյուեի, Լ. Անտոնիոլիի, Փ. Քոլինի, Ն. Ավերիթի, Ռ. Լանդեի, Վ. Վիսկուսի, Ռ. Փիթոլսկու, Թ. Թրիդիմասի, Ջ. Բրեյդիի, Դ. Քիլինգի, Զ. Ռիչարդի և այլոց, ինչպես նաև մրցակցային շուկայում սպառողների վարքագծի վերլուծության բնագավառում հեղինակավոր տեսաբաններ՝ Ռ. Իփշտայնի, Զ. Քամերերի, Փ. Սլովիկի, Ջ. Ռայթի, Զ. Դուգլասի, Բ. Սանստայնի, Ռ. Թալերի և այլոց աշխատանքների վրա:

Ատենախոսության նորմատիվ հիմքը: Չետագոտության նորմատիվ հիմքն են եվրոպայի խորհրդի, Եվրոպական միության, Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակներում ընդունված նորմատիվ իրավական ակտերը՝ բանաձևեր, դիրեկտիվներ, կանոնակարգեր, Եվրոպական հանձնաժողովի հաղորդագրություններ և այլ փաստաթղթեր, որոնք առնչվում են ապրանքների տեղաշարժի և սպառողների պաշտպանության հիմնախնդիրներին՝ Չետագոտության մեջ իրականացվել է նաև ԸՆԿերակցությունների դատարանի նախադեպային իրավունքի լայնածավալ համեմատական վերլուծություն:

Ատենախոսական հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Չետագոտության ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր (ինդուկցիա, դեդուկցիա), այնպես էլ հատուկ (համակարգային վերլուծության, պատմական և սոցիոլոգիա-

կան մեթոդները): Աշխատանքում լայնորեն օգտագործվել է համեմատական-իրավական մեթոդը: Այդ մեթոդների համակցված կիրառումը հնարավորություն է տվել վեր հանել ապրանքների ազատ տեղաշարժի և սպառողների պաշտպանության հարաբերակցության և այս ոլորտում Եվրոպական Ընկերակցության քաղաքականության պատմական զարգացման առանձնահատկությունները:

Ատենախոսության գիտական նորույթը: Սպառողների շահերի պաշտպանության բնագավառում Եվրոպական Միության քաղաքականությունը և սպառողներին տրամադրվելիք պաշտպանության մակարդակը աշխատանքում դիտարկվել է Ընկերակցության ընդհանուր շուկայի և դրանում ապրանքների ազատ տեղաշարժի հետ հարաբերակցության համատեքստում՝ ցույց տալով այն հակասությունները, որոնք պատմականորեն գոյություն են ունեցել և ի հայտ են եկել Եվրոպական Ընկերակցության քաղաքականության համար կարևոր այս երկու արժեքների փոխազդեցության պայմաններում: Ուսումնասիրելով սպառողների պաշտպանության կարևորման և այն Ընկերակցության իրավասության ոլորտ տեղափոխելու պատմական զարգացման առանձնահատկությունները, փորձ է կատարվել ցույց տալու, որ սպառողների քաղաքականությունը պատմականորեն զարգացել է ներքին շուկայի կայացման հիմքի վրա և երկար ժամանակ չի դիտարկվել որպես Ընկերակցության քաղաքականության առանձին ուղղություն: Այս հանգամանքը զգալի ազդեցություն է ունեցել սպառողների պաշտպանության սահմանների ուրվագծման հարցում Ընկերակցության քաղաքականության վրա: Ատենախոսության շրջանակներում իրականացված Ընկերակցությունների դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությանը՝ վեր են հանվում այն առաջնահերթությունները և սկզբունքները, որոնք մշակվել են Ընկերակցությունների դատարանի պրակտիկայում և ուղեցույց են հանդիսանում անդամ պետությունների համար ապրանքների ազատ տեղաշարժի սահմանափակումների օրինաչափությունը գնահատելու հարցում, երբ նժարի մյուս կողմում սպառողների շահերն են: Աշխատանքում վերլուծվում է «շրջահայաց սպառողի» Եվրոպական հայեցակարգը, որի զարգացումը Ընկերակցությունների դատարանի կողմից, ըստ էության, փոփոխեց նաև սպառողների քաղաքականության ու ներքին շուկայի քաղաքականության միջև հարաբերակցությունը՝ ընդառաջ գնալով ժամանակակից շուկայական տնտեսության պահանջներին և այն առավելություններին, որոնք սպառողը ստանում է դրա՝ պայմաններում: Այդուհանդերձ, այն հարցը, թե որքանով է «ակտիվ և ռացիոնալ» սպառողի այս նոր կերպարը համադրելի մրցակցային շուկայում նրա իրական վարքագծի հետ դեռևս խնդրահարույց է ինչպես իրավագիտության, այնպես էլ սպառողի կողմից վարքագծի ուսումնասիրությանը զբաղվող այլ գիտությունների, մասնավորապես՝ ճանաչողական և հասարակական հոգեբանության, վարքագծային տնտեսագիտության շրջանակներում: Հիմնվելով այս գիտությունների էմպիրիկ եզրահանգումների վրա՝ ատենախոսության մեջ ներկայացվում են «շրջահայաց սպառողի» Եվրոպական հայեցակարգի գործնականում կիրառման և դրանով պայմանավորված՝ սպառողների պաշտպանության հարցում ազգային հովանավորչական քաղաքականությունների սահմանների հիմնախնդիրները: ՀՀ սպառողների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցման միջոցով փորձ է կատարվել բացահայտել «քաջատեղյակ սպառողի» Եվրոպական հայեցակարգի գործառնության առանձնահատկությունը ՀՀ սպառողների համատեքստում և վեր հանել գործնականում ի հայտ եկող հիմ-

նախնդիրները, առաջարկներ են ներկայացնել սպառողների պաշտպանության ոլորտում Եվրոպական հարուստ փորձի ռեցեպցիայի և ՀՀ օրենսդրության մոտարկման ուղղությամբ:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Ապրանքների ազատ տեղաշարժի բնագավառում ԵԸ-ում ձևավորված սկզբունքները երկակի ազդեցություն ունեն սպառողների պաշտպանության վրա: Մի կողմից դրանց հիմքի վրա սպառողների պաշտպանությունը դարձել է Ընկերակցության իրավասության առարկա, մյուս կողմից՝ դրանք ստիպել են անդամ-պետություններին որոշակիորեն նահանջել սպառողների պաշտպանության բնագավառում խիստ ազգային ստանդարտներից՝ հանուն Ընկերակցության ընդհանուր շուկայի կայացման և դրանում սպառողին ընձեռվող հնարավորությունների:

2. Եթե սկզբնապես սպառողների պաշտպանության բնագավառում Ընկերակցության կողմից միջոցառումների ձեռնարկման խթանը Ընկերակցության ընդհանուր շուկայի կայացումն է եղել, ապա աստիճանաբար և հատկապես՝ Լիսաբոնի պայմանագրի փոփոխություններով, այն ձեռք է բերում հարաբերական ինքնուրույնություն: ԵԸ պայմանագրի Լիսաբոնյան փոփոխություններով սպառողների պաշտպանությունը դիտարկում է Միության և անդամ պետությունների միջև բաշխվող իրավասության առարկա, ինչը նշանակում է, որ անդամ պետությունները այս ոլորտում իրենց իրավասություններն իրականացնում են այնքանով, որոնքով դա չի իրականացվում Միության կողմից կամ այնքանով, որքանով Միությունը նրանց է վերապահել այդ մասով իրավասության իրականացումը:

3. Եթե ի սկզբանե Ընկերակցության սպառողական իրավունքի համար առաջնային են հանդիսացել ներպետական կարգավորումները, ապա ներկայումս Ընկերակցության իրավունքը միտում ունի դառնալու սպառողների պաշտպանության հարցում համակողմանի քաղաքականության իրականացման առաջնային գործիք: Միասնական կարգավորմանը աստիճանական անցումը հնարավոր է դարձել «նվազագույն ներդաշնակեցման» բանաձևի միջոցով, որը մի կողմից ապահովում է մասնակի նեգատիվ ինտեգրացիա և ազատ առևտուրը խոչընդոտող ազգային կարգավորումների վերացում, մյուս կողմից՝ անդամ երկրների մոտ պահպանվում է առավել բարձր ստանդարտներ ունենալու իրավունքը, եթե դրանք չեն հակասում Ընկերակցության մակարդակով սահմանված նվազագույն չափանիշներին:

4. Երբ բախվում են Ընկերակցության ներսում ապրանքների ազատ տեղաշարժի և սպառողների պաշտպանության շահերը, ապրանքների ազատ տեղաշարժը սահմանափակող միջոցառումների համաչափությունը գնահատելու հիմքում Ընկերակցությունների դատարանը դնում է «ինքնավար, շրջահայաց ու տեղեկացված» սպառողի հայեցակարգը՝ սպառողին դիտարկելով որպես ողջամիտ «homo economicus», շուկայի շրջահայաց, տեղեկացված ու քննադատական մասնակից: Արդյունքում, Ղատարանը հակված է տեղաշարժի ազատությանը նախապատվություն տալուն՝ մերժելով այն խիստ ազգային միջոցները, երբ սպառողների պաշտպանության նպատակներին կարելի է հավասարապես հասնել սպառողներին տեղեկատվություն տրամադրելով: Միևնույն ժամանակ, զարգացնելով «նախազուլականության սկզբունքը»՝ Ղատարանը մարդկանց առողջության և անվտանգության պաշտպանության նկատառումներով առևտրի սահմանափակումը համարում է իրավաչափ, եթե ապրանքների մեջ որոշակի տարրերի առկայության մասին գիտական

ապացույցները համոզիչ և վերջնական չեն՝ պայմանով, որ շուկա ապրանքի մուտքի սահմանափակումը հիմնված է ռիսկի մանրամասն գնահատման վրա:

5. Սպառողների պաշտպանությանն ուղղված օրենսդրությունը խնդիր ունի խթանելու և պաշտպանելու մրցակցային շուկայում տեղեկացված ընտրություն կատարելու սպառողի հնարավորությունը, բայց դրա անմիջական խնդիրը չէ երաշխավորելը, որ սպառողները գործեն բացարձակ ռացիոնալությամբ: Պետության կողմից մրցակցային շուկային «սահմանափակ» պատերձալիստական միջամտությունը թույլատրելի է միայն բացառիկ դեպքերում, երբ սպառողին տեղեկատվության տրամադրումը ի գործու չէ հավասարակշռելու սպառողի սպասումներն ու ճիշտ ընտրությունը, և երբ սխալական ընտրությունը պարունակում է սպառողի առողջության, կյանքի կամ անվտանգության համար վնասակար հետևանքների ռիսկ:

6. ՀՀ մի շարք միջազգային պայմանագրեր, ինչպես նաև ՀՀ Սաքսային օրենսգիրքը նախատեսում են ապրանքների ազատ տեղաշարժի և դրա թույլատրելի սահմանափակումների վերաբերյալ եԸ պայմանագրի հողվածներ 28-ին և 30-ին գրեթե նույնական նորմեր՝ մի բացառությամբ: ԵՄ-Հայաստան Գործընկերության և համագործակցության համաձայնագրով Ընկերակցությունից Հայաստան ապրանքների ներկրման պարագայում արգելված են և՛ քանակական սահմանափակումները, և՛ համարժեք ազդեցության միջոցները, մինչդեռ Հայաստանից Ընկերակցություն ապրանքների մուտքի պարագայում՝ միայն քանակական սահմանափակումները: Այս, ինչպես նաև «Արևելյան գործընկերության» ԵՄ նոր ծրագրի համատեքստում, որի առանցքը ԵՄ ներքին շուկայի ռեժիմին համահունչ ազատ առևտրի ռեժիմի հաստատումն է Եվրոպական հարևանության քաղաքականության երկրների հետ, ապրանքների ազատ տեղաշարժի սկզբունքների և սպառողների շահերի հավասարակշռման վերաբերյալ Ընկերակցությունների դատարանի մեկնաբանությունները արժեքավոր նշանակություն են ձեռք բերում ԵՄ-ի ՀՀ առևտրային հարաբերությունների համար:

7. «Շրջահայաց սպառողի» եվրոպական հայեցակարգի գործառնության պայմաններում սպառողների պաշտպանության բնագավառում ՀՀ քաղաքականությունը զգալի շեշտադրում պետք է կատարի սպառողներին ապրանքի վերաբերյալ պատշաճ տեղեկատվություն տրամադրելու և նրանց կողմից ապրանքների ընտրությանը առավել խորագնի մոտենալու մշակույթը տարածելու խնդիրն:

8. Սպառողների պաշտպանության բնագավառում ՀՀ օրենսդրական դաշտը բավական սահմանափակ է՝ ի տարբերություն ԵՄ-ի, որի շրջանակներում ընդունվել են բազմաթիվ դիրեկտիվներ, որոնք կարգավորում են սպառողների շահերի տեսանկյունից առավել խոցելի հարաբերությունները: Այս առումով, կարևոր է նաև սպառողների պաշտպանությանն առնչվող ՀՀ օրենսդրական դաշտի կատարելագործումը և հարստացումը՝ եվրոպական եվրոպական օրենսդրության ռեցեպցիայի և դրան ՀՀ օրենսդրության մոտարկման միջոցով:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել ինչպես Եվրոպական իրավունքի, այնպես էլ սպառողների պաշտպանության և Եվրոպական միությունում ապրանքների ազատ տեղաշարժի հիմնախնդիրներին վերաբերող առանձին դասընթացներում և գիտական հետազոտություններում: Մրցակցային շուկային սպառողների արդյունավետ մասնակցությունն ապահովելուն և սպառողների ինտելեկտուալ ունակությունների

զարգացմանն ուղղած, ինչպես նաև սպառողների պաշտպանությանը վերաբերող ՀՀ իրավական դաշտը Եվրոպական մոտարկելուն առնչվող վերլուծություններն ու առաջարկությունները կարող են նպաստել ՀՀ-ում սպառողների պաշտպանության քաղաքականության հետագա կատարելագործմանը, ժամանակակից շուկայական տնտեսության մարտահրավերներին համահունչ սպառողների պաշտպանության մակարդակի ապահովմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում, ինչպես նաև օգտագործվել են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի շրջանակներում առանձին դասընթացի մշակման ընթացքում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, ընդհանուր՝ ինը պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորված է հետազոտության թեմայի արդիականությունը, թեմայի գիտական հետազոտման աստիճանը, հետազոտության նպատակները և խնդիրները, օբյեկտը և առարկան, ատենախոսության աղբյուրագիտական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, ինչպես նաև ներկայացված են ատենախոսության հիմնական դրույթները:

Առաջին գլխում՝ «Ապրանքների ազատ տեղաշարժի և սպառողների պաշտպանության քաղաքականության պատմական զարգացումը Եվրոպական միությունում» վերտառությամբ, անդրադարձ է կատարվել ապրանքների տեղաշարժի ազատության ԵՄ քաղաքականությանը և դրա հետ սպառողների պաշտպանության քաղաքականության պատմական կապի և հարաբերակցության հիմնախնդիրների ուսումնասիրությանն ու բացահայտմանը:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «ԵՄ տարածքում ապրանքների տեղաշարժի ազատությունը և դրա սահմանափակման առանձնահատկությունները» վերտառությամբ, հետազոտության է ենթարկվել Եվրոպական Ընկերակցության (ԵԸ) տնտեսական ինտեգրման հիմքում ընկած ներքին շուկայի չորս առանցքային ազատություններից մեկը՝ ապրանքների տեղաշարժի ազատությունը: Տեղաշարժի ազատությունը, որը ենթադրում է ԵԸ անդամ պետությունների միջև միջպետական առևտրում տնտեսական սահմանների և իրավական խոչընդոտների վերացում, իր իրավական ամրագրումն է ստացել Եվրոպական Ընկերակցության հիմնադիր պայմանագրի (ԵԸ պայմանագիր) 25, 28 և 30 հոդվածներում: Պայմանագրի 28 հոդվածով արգելվում են ներմուծման քանակական սահմանափակումները և համարժեք ազդեցություն ունեցող բոլոր միջոցները, իսկ 30 հոդվածով նախատեսվում են ապրանքների ազատ տեղաշարժման սկզբունքից թույլատրելի բացառությունները: Սակայն, մշված նորմերի գործնականում տարաբնույթ մեկնաբանությունները միասնականացվել և բովանդակային հարստացում են ստացել Եվրոպական Ընկերակցությունների դատարանի (Դատարան) նախադեպային իրավունքում, որի համակողմանի ուսումնասիրության հիման վրա էլ ատենախոսության մեջ փորձ է կա-

տարվել պատասխան տալ երկու հարցի. 1) ի՞նչն է հանդիսանում առևտրային խոչընդոտ 28 հոդվածի իմաստով, և 2) որո՞նք են առևտրային խոչընդոտ հանդիսացող ազգային միջոցների թուլատրելիության սահմանները:

Ատենախոսության սույն պարագրաֆի շրջանակներում առանձնակի ուշադրություն է հատկացվել ազատ առևտրի խոչընդոտ հանդիսացող «համարժեք ազդեցություն ունեցող միջոցներ» հասկացության բովանդակության բացահայտմանը, քանի որ դրանք, ի տարբերություն քանակական սահմանափակումների, հանդես են գալիս բավականին քողարկված ձևով և արտաքուստ կարող են վերաբերել այլ հարցերի կարգավորմանը, սակայն կիրառման արդյունքում էապես սահմանափակել ապրանքների ազատ տեղաշարժը:

Այս համատեքստում վերլուծելով ապրանքների տեղաշարժի բնագավառում ԸՆկերակցությունների դատարանի նախադեպային իրավունքի գարգացումները և վեր հանելով տարբեր ժամանակաշրջանի գործերում տեղ գտած հակասական մոտեցումները, ատենախոսության հեղինակը առանձնացնում է 3 հիմնական միջոցներ, ատենախոսության հեղինակը առանձնացնում է 3 հիմնական միջոցներ, ատենախոսության հեղինակը առանձնացնում է 3 հիմնական միջոցներ, ատենախոսության հեղինակը առանձնացնում է 3 հիմնական միջոցներ:

• *Procureur du Roi v. Dassonville*-ի գործով ԸՆկերակցությունների դատարանը կատարեց ներմուծման սահմանափակման վրա «համարժեք ազդեցություն ունեցող միջոցներ» հասկացության բացահայտման առաջին քայլը՝ նշելով, որ այն վերաբերում է «անդամ պետությունների կողմից ընդունված բոլոր առևտրային կանոններին, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն, իրականում կամ ըստ հնարավորին (պոտենցիալ), ունակ են խոչընդոտելու ներքնկերակցային առևտուրը»: «*Դատունվիյան բանաձև*» անվանմամբ հայտնի այս սահմանումը, «համարժեք ազդեցություն ունեցող միջոցների» սահմանման տակ ներառեց պետության կամ վերջինիս հովանավորությամբ գործող ցանկացած մարմնի գործողությունը կամ անգործությունը, որի արդյունքում ներմուծվող ապրանքը հայտնվում է տեղական արտադրանքի համեմատությամբ խտրական անհավասար պայմաններում, ներմուծումը դառնում է ավելի բարդ կամ ծախսատար:

• *Cassis de Dijon*-ի (*Rewe-Zentral v. Bundesmonopolverwaltung für Branntwein*)-գործով Դատարանը քննության է առել այսպես կոչված *անուղղակիորեն խտրական ազգային միջոցների հարցը*, որոնք առաջին հայացքից վերաբերում են և՛ ներմուծվող, և՛ տեղական ապրանքներին, բայց *de facto* ոչ հավասար ազդեցություն են ունենում ներմուծվող ապրանքների վրա՝ տեղականի համեմատությամբ առաջինների վրա դնելով մեկի փոխարեն երկու շուկաներում գործող տեխնիկական ստանդարտներին և այլ նորմատիվ պահանջներին, համապատասխանելու բեռ: Այս գործով Դատարանը ներդրեց առևտրի խոչընդոտների թուլատրելիության զմախտման երկու չափանիշ, այն է՝ 1) ապրանքների ազատ տեղաշարժը սահմանափակող ազգային միջոցները ուղղված են եղել հանրային շահերից բխող որոշակի պարտադիր պահանջների բավարարմանը և հետապնդել են ԸՆկերակցության իրավունքի հետ համահունչ նպատակներ, 2) այդ միջոցները համաչափ են եղել և կիրառվել են միայն այնքանով, որքանով անհրաժեշտ են եղել այդ նպատակներին հասնելու համար: Իր մի շարք քննադատելի կողմերով հանդերձ, *Cassis de Dijon*-ի վճռի նշանակալի նորամուծություններից էր «*փոխադարձ ճանաչման*» սկզբունքի ներդրումը, որը շնորհիվ է՛լ անդամ պետության տարածքում օրինականորեն արտադրված

և/կամ վաճառվող ապրանքը ազատորեն կարող է մուտք գործել ԸՆկերակցության անդամ ցանկացած պետության տարածք՝ դրանով իսկ վերացնելով անուղղակիորեն խտրական միջոցների մի մեծ խումբ, որոնք կապված էր տեխնիկական ստանդարտների բնագավառում ազգային օրենսդրությունների միջև տարբերությունների հետ:

• *Keck*-ի և *Mithouard*-ի միացյալ գործով Դատարանը տարանջատեց «ապրանքին վերաբերող կանոններ» եզրույթով հայտնի անուղղակիորեն խտրական միջոցները «վաճառքի կարգավորումներից», որոնք վերաբերում էին ապրանքների վաճառքի եղանակներին՝ սահմանելով, որ վերջիններին ընտրության հարցում պետություններն ազատ են, քանի որ դրանք չեն միջամտում ապրանքների ազատ տեղաշարժին և չեն ընկնում հոդված 28-ի սահմանների մեջ՝ պայմանով, եթե ա) այդ կարգավորումները տարածվում են պետության տարածքում առևտրային գործունեություն իրականացնող բոլոր սուբյեկտների վրա և բ) դրանք նույն կերպ են ազդում՝ *de jure* և *de facto*, ինչպես տեղական ապրանքների, այնպես էլ այլ անդամ պետություններից ներմուծվող ապրանքների առուվաճառքի վրա:

Ներքնկերակցային առևտրում խոչընդոտներ ստեղծող ազգային կարգավորումները է՛լ անդամ պետությունները հաճախ փորձել են արդարացնել ու հիմնավորել սպառողների շահերով, այդ իսկ պատճառով ատենախոսության այս պարագրաֆում քննարկված նախադեպերի հիմնական մասը ընկած են մաև սպառողների պաշտպանության եվրոպական հայեցակարգի ձևավորման հիմքում և դրանց ուսումնասիրությունը թույլ է տվել բացահայտել այն չափանիշները, որոնցով ԸՆկերակցությունների Դատարանը հավասարակշռել է ապրանքների ազատ տեղաշարժի և սպառողների պաշտպանության շահերը:

Ապրանքների ազատ տեղաշարժի սկզբունքի բովանդակային հիմքը կազմող դատական նախադեպերի ուսումնասիրության հիման վրա, ատենախոսության հեղինակը փաստում է, որ Դատարանի պրակտիկան ինքնին գերծ չի եղել հակասություններից և թերացումներից: Այսպես, *Dassonville*-ի գործով «համարժեք ազդեցության միջոցների» լայն սահմանումը տրվել է իրավական հստակության հաշվին: *Cassis de Dijon*-ում, ստեղծելով հոդված 28-ից բացառությունների ոչ սպառիչ ցանկ, Դատարանը խորացրել է հոդվածներ 28-ի և 30-ի իրավական անկանխատեսելիությունը: *Keck*-ում Դատարանի դիրքորոշումը ևս առաջացրել են նախադեպային իրավունքի միատեսակության ցնցումներ՝ բերելով նախկինում քննված նմանատիպ գործերով Դատարանի դիրքորոշումներից ոչ բավարար պատճառաբանված շեղումների: Այդուհանդերձ, ԸՆկերակցությունների դատարանը ակտիվ դերակատարում է ունեցել ԸՆկերակցության բացասական ինտեգրացման հարցում՝ նպաստելով եվրոպական միությունում ապրանքների ազատ տեղաշարժի ազգային արգելքների վերացմանն ու ազատ շուկայական մրցակցությունը խթանող ազգային քաղաքականությանը միջամտելուն ուղղված իրավական մեխանիզմների լուրջ համալիրի ձևավորմանը:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում «Սպառողների պաշտպանության ներգրավումը եվրոպական ԸՆկերակցության իրավասությունների ոլորտ. հարաբերակցությունը ներքին շուկայի քաղաքականության հետ» վերտառությամբ, անդրադարձ կատարելով եվրոպական ԸՆկերակցության հիմնադիր 1957թ. 3-րդի պայմանագրի, 1987թ. Միասնական եվրոպական ակտի, դրույթներին՝ ցույց է տրվում, որ

սպառողների պաշտպանության բնագավառում եՇ քաղաքականությունը պատմականորեն զարգացել է ներքին շուկայի կայացման համատեքստում և երկար ժամանակ չի դիտարկվել որպես ԸՆԿերակցության քաղաքականության առանձին ուղղություն: Ավելին, հենց ներքին շուկայի «չորս հիմնարար ազատություններին» վերաբերող գործերի համատեքստում է զարգացել սպառողների պաշտպանության առնչվող ԸՆԿերակցությունների դատարանի նախադեպային իրավունքը: Այս գործերի շարքում առաջամարտիկներից էր 1978թ.-ի *Cassis de Dijon*-ի գործը, որով Դատարանը, սպառողների պաշտպանությունը ներառեց առևտրի խոչընդոտ հանդիսացող միջոցները արդարացնելու հիմքերի մեջ՝ դրանով իսկ սպառողների պաշտպանության հարցերը դարձնելով ԸՆԿերակցության հետաքրքրության և ուշադրության առարկա: Այս հարցում շրջադարձային է հանդիսացել 1992թ.-ի Եվրոպական միության մասին Մաստրիխտի պայմանագիրը, որը ԸՆԿերակցությանը հստակ մանդատ վերապահեց սպառողների պաշտպանության բնագավառում: 1997թ. Ամստերդամի և 2001թ. Նիցի պայմանագրերի փոփոխությունների լույսի ներքո դիտարկելով սպառողների պաշտպանության բնագավառում Եվրոպական ընկերակցության իրավասությունը ատենախոսության հեղինակը փաստում է, որ այն ներկայումս ևս սահմանափակ է, քանի որ չի հանդիսանում ԸՆԿերակցության բացառիկ իրավասության առարկա և արդյունքում սպառողների պաշտպանությանը վերաբերող ԸՆԿերակցության առանձին նախաձեռնությունները հարկ է լինում հիմնավորել ներքին շուկայի կայացման նպատակներով՝ որպեսզի «կանաչ լույս» ստանան իրագործման համար: Իրավիճակը փոփոխվում է Եվրոպական միության և եՇ հիմնադիր փաստաթղթերն փոփոխող 2007թ. Լիսաբոնի նոր պայմանագրով, որը սպառողների պաշտպանությունը դիտարկում է ԸՆԿերակցության բաշխվող իրավասության առարկա՝ դրանով իսկ այս ոլորտում ԸՆԿերակցության գործողություններին առավել լայն ինքնուրույնություն վերապահելով: Այդուհանդերձ, ներքին շուկայի և սպառողների պաշտպանության միջև կապը բավական սերտ է, և Եվրոպական Միության շրջանակներում ընդունված շատ իրավական ակտեր ու փաստաթղթեր սկսում են այն դրույթից, որ սպառողների պաշտպանությանը վերաբերող օրենսդրությունը պետք է Եվրոպական մակարդակում ներդաշնակեցվի, որպեսզի վերացվեն մրցակցության այն խոչընդոտները, որոնք կարող են արգելակել ներքին շուկայի գործառնությունը:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «Սպառողների պաշտպանության բնագավառում ԵՄ անդամ պետությունների ազգային քաղաքականությունների ներդաշնակեցման միտումները» վերտառությամբ, վերլուծում է սպառողների պաշտպանության բնագավառում Եվրոպական ընկերակցության և անդամ պետությունների քաղաքականությունների միջև հակասությունների հաղթահարման ընթացքը: Ազատ առևտրի քաղաքականության ներդրումից ի վեր Եվրոպական ընկերակցության անդամ երկրները բախվել են սպառողներին տրամադրվող պաշտպանության տարբեր մակարդակների և օրենսդրական կարգավորումների տարբերությունների խնդրին, որոնք հանդես են եկել որպես առևտրի խոչընդոտ՝ խաթարելով մրցակցությունը շուկայում և վտանգելով ընդհանրապես ԸՆԿերակցության ներքին շուկայի կայացման գաղափարը: ԵՇ շրջանակներում այս խնդրին տարիներ շարունակ փորձել են լուծում տալ անդամ երկրների օրենսդրությունների միասնականացմանը և ազգային քաղաքականությունների ներդաշնակեցմանն ուղղված ակտիվ ջանքերի միջո-

ցով, որոնք, սակայն, հանդիպելով անդամ պետությունների շահերի բախմանը՝ ԸՆԿերակցությունում ունեցել են ուրույն ընթացք: Առաջ քաշելով «նվազագույն ներդաշնակեցման» փոխզիջումային բանաձևը՝ ԸՆԿերակցության մակարդակով հաջողվել է սահմանել ընդհանուր նվազագույն չափանիշներ, միևնույն ժամանակ՝ անդամ երկրների համար պահպանելով առավել բարձր ստանդարտներ ունենալու իրավունքը՝ պայմանով, որ վերջիններս չպետք է հակասեն ԸՆԿերակցության մակարդակով սահմանված նվազագույն չափանիշներին: Ընդ որում սպառողների պաշտպանության ոլորտում ԸՆԿերակցության հովանու ներքո իրականացվող օրենսդրական ներդաշնակեցումը հնարավոր է հանդիսացել և հանդիսանում է միայն այնքանով, որքանով դա կարող է իր նպաստը բերել ապրանքների ազատ տեղաշարժի կամ ծառայություններ մատուցելու ազատության խոչընդոտների կամ մրցակցության խաթարումների վերացմանը: Այս հանգամանքը ևս մեկ անգամ ընդգծում է այն սերտ փոխկապվածությունը, որն առկա է եղել և շարունակում է առկա լինել սպառողների պաշտպանության և ներքին շուկայի քաղաքականությունների միջև:

Ուսումնասիրելով ԵՄ անդամ պետությունների սպառողների պաշտպանության քաղաքականությունների ներդաշնակեցման պատմական զարգացումները, գալիս ենք այն եզրահանգման, որ եՇ անդամ պետությունների տնտեսությունների ինտեգրացիան առաջացնում է նաև վերջիններս սպառողական քաղաքականությունների համաձայնեցման անհրաժեշտություն՝ ազատ առևտրի պայմաններում սպառողներին արդյունավետ պաշտպանություն տրամադրելու և համապատասխանաբար ազատ առևտրի ռեժիմից առավելագույն օգուտներ քաղելու համար: Այդ իսկ պատճառով էլ, եթե ի սկզբանե ԸՆԿերակցության սպառողական իրավունքի համար առաջնային են հանդիսացել ներպետական կարգավորումները, ապա ներկայումս ԸՆԿերակցության իրավունքը միտում ունի դառնալու սպառողների պաշտպանության հարցում համակողմանի քաղաքականության իրականացման առանցքային գործիքը:

Երկրորդ գլխում՝ «Սպառողների պաշտպանության սահմանների հիմնախնդիրը Եվրոպական միության ընդհանուր շուկայի համատեքստում» վերտառությամբ, հետազոտության առարկա են հանդիսացել սպառողների պաշտպանության օպտիմալ մակարդակի հարցում ԸՆԿերակցության և անդամ պետությունների մոտեցումներում առկա հայեցակարգային տարբերությունները, դրանց լուծման հարցում ԸՆԿերակցությունների դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված սկզբունքները, մրցակցային շուկայում սպառողի վարքագծի առանձնահատկությունները և դրանով պայմանավորված՝ շուկային պետական հովանավորչական միջամտության սահմանների հարցը:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Սպառող հասկացությունը և «շրջահայաց սպառողի» հայեցակարգի ձևավորումը ԵՄ իրավունքում» վերտառությամբ, նախ և առաջ անդրադարձ է կատարվում այն հարցին, թե ի՞նչ ենք հասկանում սպառող ասելով և ո՞ր կատեգորիաներն են մտնում այս հասկացության տակ՝ Եվրոպական իրավունքի իմաստով: Հիմնվելով սպառողներին ուղղված ԵՄ իրավական ակտերի վրա՝ տեսության մեջ տարանջատվում են սպառող հասկացության նեղ և լայն սահմանումներ՝ կախված համապատասխան իրավահարաբերության կոնտեքստից: Առաջին մոտեցումը հանգում է, այսպես կոչված, «գործարքային սահ-

մանձանը», որի ժամանակ սպառողը դիտարկվում է որևէ ֆիզիկական անձ, որը պայմանագիր է կնքում իր անձնական և ոչ թե՛ գործարար ու մասնագիտական գործունեության հետ կապված կարիքների բավարարման համար: Երկրորդ մոտեցումը դուրս է գալիս պայմանագրային կոնտեքստից և ներառում է ցանկացած անձի, որի տնտեսական կամ ֆիզիկական շահերը պաշտպանության կարիք ունեն՝ անկախ ապրանքի ձեռք բերման նպատակներից: Ընդ որում ե՛լ իրավունքում մեջ առավել հաճախ է հանդիպում սպառող հասկացության «գործառքային սահմանումը»: Ընդհանրացնելով ե՛ս իրավունքում ձևավորված մոտեցումները՝ կարելի է ասել, որ սպառող հասկացության նեղ և լայն իմաստների տարբերակման հիմքում ընկած է այն օբյեկտը, որը պաշտպանության առարկա է, և պաշտպանության այն ծավալը, որը ցանկանում են տրամադրել սպառողին: Ընդ որում, կանխավարկածն այն է, որ առևտրային հարաբերությունների մասնակից սուբյեկտը կամ գործարարը ենթադրաբար առավել քաջատեղյակ պետք է լինի իր իրավունքներին և խոհեմ գործի, որից էլ նեղվով էլ վերջիններիս տրամադրվող պաշտպանության ծավալը ավելի սահմանափակ է:

Ատենախոսության սույն պարագրաֆի երկրորդ մասում վերլուծվում է ե՛ս իրավունքում «չրջահայաց սպառողի» հայեցակարգի ձևավորման ընթացքը՝ Ընկերակցությունների դատարանի նախադեպային իրավունքի լուսի ներքո:

Շահագրգռված լինելով Ընկերակցության ընդհանուր շուկայի կայացման և պարտքերի տեղաշարժի ազատության խոչընդոտները վերացնելու հարցում, ԵԸ անհամ երկրները միևնույն ժամանակ ձգտում են կանխել այն ապրանքների մուտքը իրենց շուկա, որոնք չեն համապատասխանում ազգային ստանդարտներին ու պահանջներին և/կամ այլ կերպ կարող են վտանգել հանրային առողջությունն ու անվտանգությունը: Սակայն, քանի որ ազգային ստանդարտները, տեխնիկական պահանջները և այլ նորմատիվ կարգավորումները ամենափոքից էլ նույնական չեն բոլոր երկրներում, դրանք հանդիսացել են Ընկերակցության ներսում ազատ առևտրի խոչընդոտների ստեղծման աղբյուր և վտանգել ներքին շուկայի գաղափարը: Ազգային սպառողներին պաշտպանելու՝ ԵԸ անդամ-երկրների սնունդային անվտանգության ապահովման հարցում սպառողների պաշտպանության օպտիմալ մակարդակի որոշման անհրաժեշտություն: Սպառողների պաշտպանության սահմանները հարցը հանգեցրել է հայեցակարգային լուրջ տարբերությունների Ընկերակցության առանձին անդամ-պետությունների և Ընկերակցության մոտեցումներում: Խնդիր նրանում է, որ եթե անդամ երկրների մեծամասնությունը սպառողին դիտարկում է որպես թույլ կողմ, որը կարիք ունի իր շահերի հատուկ պաշտպանության, ապա Ընկերակցության մոտեցումը սպառողների պաշտպանության հարցերին այլ է: Ե՛ն սպառողին դիտարկում է որպես մրցակցային շուկայի առանցքային դերակատար, «ակտիվ սպառող», որն ընդհանուր առմամբ կարիք չունի գերպաշտպանության: Փոխարենը, նրան անհրաժեշտ են կանոններ և հմտություններ, որոնք հնարավորություն կտան վերջինիս գործելու ներքին շուկայում և առավելագույն օգուտներ քաղելու դրանից: Այս է պատճառը, որ ապրանքների ազատ տեղաշարժը և սպառողների պաշտպանությունը շարունակ հանդես են եկել որպես միմյանց հետ նպատակներ:

Սպառողների պաշտպանության սահմաններին ուղիղ ազդեցություններ են ունենում դատարանը իր նախադեպային իրավունքում առաջ է քաշել «չրջահայաց

հայաց սպառողի» հայեցակարգը՝ դրա հիմքում դնելով տեղեկացված, քննադատական և ողջամիտ սպառողին: Ելնելով ապրանքի վերաբերյալ տեղեկատվությունը վերլուծելու և տեղեկացված ընտրություն կատարելու սպառողի ունակությունից, դատարանը հետևողականորեն մերժում է բոլոր այն ազգային միջոցները, որոնք խոչընդոտում են ապրանքների մուտքը Ընկերակցության շուկա, երբ սպառողների պաշտպանության նպատակներին կարելի է հավասարապես հասնել սպառողների համար պատշաճ տեղեկատվություն մատչելի դարձնելով: Տեսության մեջ կարելի է հանդիպել Ընկերակցությունների դատարանի կողմից ելակետային ընդունված այդ ռացիոնալ վարքագիծ ունեցող սպառողի տարբեր անվանումներ՝ տեղեկացված սպառող, 'bon père de famille,' 'homo economicus,' ինչպես նաև փորձառու (խելամիտ), ուշադիր, քաջատեղյակ, լիովին ռացիոնալ սպառող:

Այսպիսով, շրջահայաց սպառողի հայեցակարգի հիմքերը դնելով դեռևս 1978թ. Cassis de Dijon-ի գործով, ատենախոսության սույն պարագրաֆում ցույց է տրվում, որ դատարանը բազմաթիվ հետազոտություններում (Drie Glocken v. USL Centro-Sud, Ministère Public v. Deserbais, Clinique Cosmetics, Mars և այլն) հետևողականորեն մերժել է շուկայի անհարկ գերկարգավորումները և ոչ ողջամտորեն շրջահայաց սպառողի շահերը համարել էր նվազ կարևոր, քան ընդհանուր առմամբ այն սպառողների շահերը, որոնք մասնակցում են ինտեգրված, առավել մրցակցային Եվրոպական շուկային: Եկատեմք, որ դատարանի նման մոտեցումը իր ակունքներով բխում է նաև «սպառողի ինքնավարության» հայեցակարգից, որը սպառողների պաշտպանության և ընդհանուր առմամբ շուկայական տնտեսության ժամանակակից հայեցակարգի հիմնասյուներից է և կարող է խաթարվել սպառողների գերպաշտպանությամբ:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Ինքնավար սպառողը և նրա վարքագիծը ազատ շուկայում. պետական հովանավորչության սահմանները», մրցակցային շուկայում սպառողի վարքագծի ուսումնասիրությանը վերաբերող առկա հարուստ տեսական բազայի հիմքի վրա հետազոտության են ենթարկվում սպառողի շրջահայաց և ռացիոնալ լինելու Եվրոպական մոտեցման հիմնախնդիրները գործնականում և դատողություններ են արվում ազատ շուկային սպառողների շահերի պաշտպանությամբ պայմանավորված պետական հովանավորչական միջամտության սահմանների վերաբերյալ:

Սպառողների պաշտպանության քաղաքականության բնագավառի վիճելի հարցերից մեկը այն է, թե արդյոք սպառողի շահերը առավել լավ են պաշտպանված պետական կարգավորիչ մեխանիզմների, թե այնպիսի միջոցներով, որոնք հիմնվում են սպառողի տեղեկացված որոշումների կայացումը խթանելու վրա՝ նրանց ազատություն վերապահելով ընտրելու այն, ինչ համապատասխանում է իրենց նախասիրություններին: Այս հարցերի շուրջ ձևավորվել են երկու միմյանցից տարբերվող տեսական մոտեցումներ, որոնցից առաջինը սպառողին համարում է ռացիոնալ, հետաքրքրվող և շուկայում լավ կողմնորոշվող դերակատար (*Նեոկլասիկ մոտեցում*) և մյուսը, որը սպառողին դիտարկում է որպես որոշակի սխտեմատիկ վարքագծային սխալների հակված անհատի (*վարքագծային մոտեցում*)՝ հիմնավորելով սպառողների պաշտպանության համար պետական կարգավորումների միջոցով լայն հովանավորչական միջամտության անհրաժեշտությունը: Ընդ որում և նեոկլասիկ, և վարքագծային տեսությունները հիմնվում են «սպառողի ինքնավարության» սկզբունքի

վրա, որը ժամանակակից շուկայական տնտեսությունների հրամայականն է և ելնում է այն կանխավարկածից, որ սպառողները ձգտում են առավելագույն օգտակարության մրցակցային շուկայի պայմաններում:

Շուկայում սպառողի վարքագծի ուսումնասիրությունները բերում են այն եզրահանգման, որ ինքնավար սպառողը ազատ շուկայում կարող է կատարել իր համար լավագույն ընտրությունը, միայն այն պարագայում, երբ առկա են հետևյալ նախապայմանները. 1) շուկայում կա այլընտրանք, 2) սպառողներին տրամադրվում է տեղեկատվություն և 3) նրանք ունեն ունակություն ազատ ընտրություն կատարելու շուկայի այլընտրանքների մեջ:

Ապրանքի ընտրության համար անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությունը առաջնային նշանակություն ունի ակտիվ, ինքնավար սպառողի համար և հանդիսանում է սխալ ընտրությունից նրան զերծ պահելու մեկնարկային կետը: Իհարկե դա դեռ չի նշանակում, որ սպառողը այս դեպքում, ամբողջովին երաշխավորված է իր նախասիրությունների և ընտրության միջև առանձին շեղումներից, բայց դրանք հնարավոր է հաղթահարել փորձառության (էվրիստիկայի) և կրկնվող ընտրությունների միջոցով: Ընդ որում սպառողներին պետք տրամադրել միայն այնպիսի օպտիմալ քանակի տեղեկատվություն, որը նրանք իրավամբ ունակ են վերլուծելու, քանի որ գերտեղեկատվությունը կարող է սպառողների վրա հակառակ ազդեցություն ունենալ՝ ցնցելով ու շփոթեցնելով նրանց: Այն պետք է սպառողներին հաղորդի ապրանքի և դրա լայնորեն հնարավոր վտանգավոր հետևանքների վերաբերյալ միայն այնպիսի ընդհանուր տեղեկություններ, որոնք առանցքային են ապրանքի ընտրությունը կատարելիս:

Համապատասխան տեղեկատվություն ապահովելը, սակայն, սպառողների պաշտպանությանն ուղղված միայն մի միջոց է, որն էլ ոչ միշտ է արդյունավետ, քանի որ.

- սպառողներն սովորաբար ժամանակ չունեն հավաքելու, վերլուծելու և ստուգելու տրամադրվող տեղեկատվությունը, որի պայմաններում առաջ է մղվում տպավորության տակ, զգայական կամ էմպիրիկ ընտրությունը,
- սպառողն ոչ միշտ է ունակ հասկանալու և վերլուծելու տրամադրվող տեղեկատվությունը,
- սպառողի վարքագծին բնորոշ է ռիսկերի նկատմամբ լավատեսությունը կամ դրանք համարժեք գնահատելուն անընդունակ լինելը:

Այդ իսկ պատճառով էլ, հեղինակը առաջ է քաշում այն տեսակետը, որ մրցակցային շուկայում սպառողին տեղեկատվության տրամադրումը չպետք է սահմանափակվի միայն ապրանքի պիտակներով, ինչը հարցի միայն ֆորմալ կողմն է: Երբ կարող են գոյություն ունենալ լուրջ ռիսկեր կամ լրացուցիչ պարզաբանումների անհրաժեշտությունը արդարացված է սպառողների շահերով, տեղեկատվության տրամադրումը պետք է իրականացվի նաև հատուկ պետական քարոզարշավի, հայտարարությունների, ուսուցողական ծրագրերի, հեռուստատեսային շոուների, թուցիկների տարածմամբ և հասարակական հետաքրքրությունը խթանող այլ տարածված միջոցներով, որի պայմաններում միայն կարելի է տեղեկատվության ապահովման խնդիրը պատշաճ իրականացված է համարել և սպառողի ակնկալել շրջահայաց ընտրություն:

Այսպիսով, սպառողների պաշտպանության ժամանակակից քաղաքականությունը պետք է ուղղված լինի պաշտպանելու սպառողներին սպառողական շփոթությունների առավել ծանր ձևերից կամ արմատական խեղաթյուրումներից ու մոլորեցումներից, որոնցից միջին և ողջամիտ սպառողը գործնականում ունակ չէ խուսափել: Մինչդեռ, ամենակին էլ անհրաժեշտ չէ սպառողին պաշտպանել մանր շփոթություններից, գովազդային չափազանցություններից, որոնցից սպառողը կարող է զերծ պահել իրեն՝ ընդամենը ողջամտություն և պարզ գննականություն ցուցաբերելով:

Միևնույն ժամանակ, վերլուծելով շուկայում սպառողի վարքագծի թերացումներն ու սայթաքումները, հանգում ենք նաև այն տեսակետին, որ որոշ դեպքերում սպառողը պարզապես անընդունակ է ժամանակին և պատշաճորեն արձագանքելու ազատ շուկայի զարգացումներին և դրանում ապրանքների մեծ հոսքի, ինչն էլ թույլ չի տալիս լիովին հենվել քաջատեղյակ, ռացիոնալ, խելամիտ սպառողի հայեցակարգի վրա: Այդ իսկ պատճառով էլ ատենախոսության հեղինակը, ի տարբերություն նեոկլասիկների, առաջ է քաշում այն տեսակետը, որ պետական միջամտությունը շուկային, կարող է գոյակցել և համատեղելի լինել սպառողի ինքնավարության հայեցակարգի հետ: Այս առումով, նեոկլասիկների և վարքագծային տեսությանը որպես փոխզիջումային տարբերակ, տեսության մեջ առաջ է քաշվել նաև *«սահմանափակ»* կամ այսպես կոչված *«մեղմ» պատերճալիստական միջամտության* գաղափարը, որպիսի միջամտության օրինակներ են լիցենզավորումը, որոշակի տեսարանների բեմականացումը, ընտրության պատվիրակումը, կրթության խրախուսումը: Սակայն պետության պատերճալիստական միջամտությունը հիմնավոր է միայն բացառիկ դեպքերում, երբ սպառողին տեղեկատվության տրամադրումը ի գործ է հավասարակշռելու սպառողի սպասումներն ու ճիշտ ընտրությունը, և երբ սխալական ընտրությունը պարունակում է սպառողի առողջության, կյանքի կամ անվտանգության համար վնասակար հետևանքների ռիսկ: Այսինքն, այն դեպքում, երբ սպառողը կարող է ճիշտ ընտրության հանգել կրկնվող գնումների, ամենօրյա փորձի, սովորելու, ապրանքի վերաբերյալ այլ սպառողների հետ փորձի փոխանակման, ինքնուրույն գնահատելու կամ մասնագետի օգնությանը դիմելու ճանապարհով, պետական միջամտությունը որպես կանոն տեղին չէ: Նման միջամտությունը պետք է միշտ հաշվի առնի *«սպառողի ինքնավարության»* և *«սպառողի տեղեկացվածության»* սկզբունքները՝ շուկայի խնդիրների հիմնական մասի լուծումները փորձելով գտնել սպառողի տեղեկացվածությունը և նրա կրթումը խրախուսելու մեջ: Հակառակ դեպքում, այն կարող է վերածվել սպառողների պաշտպանության պատրվակի տակ շուկայի գերկարգավորման միտումի:

Առաջնորդվելով *«սպառողի ինքնավարության»* և *«սպառողի տեղեկացվածության»* հայեցակարգերով ԵՄ Սպառողների պաշտպանության 2007-2013թթ. ռազմավարությունը սպառողների պաշտպանության հարցում Միության քաղաքականությունը կառուցում է ժամանակակից տնտեսության մեջ սպառողների ակտիվ դերն իրագործելու համար նրանց անհրաժեշտ հմտություններով և գործիքներով ապահովելու նպատակների վրա:

Ամփոփելով մրցակցային շուկայում սպառողների վարքագծի դրսևորումների և սպառողների պաշտպանության հարցում պետության պատերճալիստական միջամտության սահմանների վերաբերյալ վերլուծության արդյունքները, ատենախոսության մեջ առաջ են քաշվում մի շարք ընդհանուր ուղղորդիչ մոտեցումներ՝ պետութ-

յան կողմից սպառողների պաշտպանության միջոցառումների ձեռնարկման հետ կապված.

1. սպառողների պաշտպանության անհրաժեշտության որոշումը պետք է սկսվի դրա համար փաստական հիմքերի առկայության բացահայտումից, որի համար հարկ է պատասխան տալ երեք հիմնական հարցի.

ա) ինչպե՞ս է սպառողը իրականում հասկանում ապրանքի վերաբերյալ տեղեկատվությունը (ինչը պետք է պարզվի սպառողական հարցումների միջոցով),

բ) որո՞նք են ապրանքի իրական բնութագրիչները,

գ) արդո՞ք սխալական ընկալումը ազդում է սպառողի ընտրության վրա:

2. մյուս կարևոր քայլը սպառողների պաշտպանության համապատասխան և համարժեք միջոցների որոշման հարցն է: Այստեղ պետք է ապահովել ողջամիտ հավասարակշռություն մի կողմից սպառողների առավել խոցելի խմբերի, որոնց շահերը հատուկ ուշադրության կարիք ունեն (օրինակ՝ մտավոր հետամնացներ, ծերեր, հիվանդներ, երեխաներ, օտարերկրացիներ և այլն) և մյուս կողմից տեղեկատվություն փնտրող, հետաքրքրվող սպառողների օրինական շահերի միջև: Ընդ որում, սպառողների պաշտպանությանն ուղղված՝ ապրանքների ազատ տեղաշարժը խաթարող միջոցների ձեռնարկումը պետության կողմից արդարացված է միայն սպառողների մոլորության նշանակալի հավանականության առկայության պարագայում:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Սպառողների առողջության և անվտանգության պաշտպանության նկատառումներով ԵՄ շուկայում ապրանքների տեղաշարժի ազատության սահմանափակումները», ուսումնասիրության են ենթարկվել ԵՄ շուկայում ապրանքների տեղաշարժի սահմանափակման սկզբունքային մոտեցումները, երբ խնդրո առարկա է սպառողների կյանքի ու առողջության պաշտպանությունը:

Ընդունելով, որ Ընկերակցության հանրային կարգը չի կարող կառուցվել բացառապես շուկայական արժեքների վրա, Դատարանը մի շարք գործերով ընդգծել է, որ դրանք պետք է հավասարակշռվեն հասարակության համար մտահոգիչ այլ արժեքներով: Դատարանը բազմիցս վերահաստատել է նաև այն, որ մարդկանց առողջությունն ու կյանքը ԵԸ Պայմանագրի հոդված 30-ով պաշտպանվող առաջնային արժեքներից են, և այս ոլորտում Ընկերակցության մակարդակով ընդունված կարգավորումների բացակայության դեպքում՝ անդամ պետությունների իրավասությանն է վերապահված սպառողներին տրամադրման ենթակա պաշտպանության մակարդակը որոշելու իրավունքը: Սակայն, ընտրված միջոցները չպետք է ծառայեն որպես անդամ պետությունների միջև առևտրի կամայական սահմանափակումների կամ քողարկված խտրականության միջոցներ:

Սպառողների առողջության և անվտանգության պաշտպանության հետ կապված Դատարանը զարգացրել է այսպես կոչված «նախազգուշականության սկզբունքը» (*'precautionary principle'*)՝ անդամ պետություններին որոշակի ազատություն վերապահելով ապրանքների ազատ տեղաշարժը սահմանափակող միջոցների ձեռնարկման հարցում, երբ կասկածներ կան ապրանքի որոշակի բաղադրամասերի (ինգրեդիենտների) սպառողների առողջության վրա վնասակար ազդեցության վերաբերյալ և գիտական ապացույցները համոզիչ ու վերջնական չեն: Չնայած «նախազգուշականության սկզբունքի» իրավական հստակ ամրագրման բացակայությանը, դրա բովանդակությունը ամբողջականացվել է Դատարանի նախադեպային իրավունքով

և 2000թ.-ին ընդունված Եվրոպական Հանձնաժողովի Հաղորդագրությամբ: Արդյունքում, ձևավորված մոտեցումների համաձայն, նախազգուշական միջոցառումների ձեռնարկումը պետք է հիմնված լինի տվյալ պահի գիտական զարգացման մակարդակի ընձեռած հնարավորություններին համապատասխան ռիսկի ամբողջական գնահատման վրա, որը ենթադրում է 4 փուլ. 1) վտանգի իդենտիֆիկացում, 2) վտանգի բնութագրում, 3) վտանգված լինելու հավանականության գնահատում, 4) ռիսկի նկարագրում (բացասական ազդեցության հավանականության, հաճախականության և ուժգնության որակական և քանակական գնահատում):

Այսպես, ատենախոսության մեջ ներկայացված մի շարք գործերում (*Eyssen, Sandoz* և այլն), Դատարանը ընդունելի է համարել որոշակի վիտամինով հարստացված կամ կոնսերվացնող տարր պարունակող սննդամթերքի ներմուծման արգելքը, նշելով, որ թեև վիտամինները ընդհանուր առմամբ վտանգավոր չեն, բայց կարող են կոնկրետ վնասակար հետևանքներ ունենալ, եթե չափից ավելի օգտագործվեն որպես սովորական սննդի մաս, որի սպառման ծավալները անկանխատեսելի են և գնահատման ոչ ենթակա: Մինչդեռ նույնաման մեկ այլ 2003թ. *Commission v. Denmark* գործով, վիտամիններով հարստացված սննդամթերքի ներմուծման ընդհանուր արգելքը Դատարանը համարել է անհամաչափ և Պայմանագրի հոդված 28-ի ու 30-ի խախտում, քանի որ չէր իրականացվել ռիսկի մանրամասն գնահատում և տարբերակում ներմուծվող յուրաքանչյուր սննդամթերքի և հավելվող յուրաքանչյուր վիտամինի առումով:

Մեկ այլ, 1998թ. *United Kingdom of Great Britain and Northern Ireland v. Commission of the European Communities*-ի գործով «կովերի կատաղության» համաճարակի փոխանցումը կանխելու նկատառումներով պայմանավորված Ընկերակցության անդամ պետության շուկա ապրանքի մուտքի սահմանափակման հետ կապված, Դատարանը գտավ, որ երբ առկա է մարդկային առողջության համար ռիսկ և/կամ անորոշ են դրա ծավալները, նախազգուշական միջոցառումների ձեռնարկումը թույլատրելի է՝ անգամ չսպասելով, որ այդ ռիսկերի իրական լինելը կամ լրջությունը դառնան լիովին ակնհայտ:

Ատենախոսության սույն պարագրաֆի շրջանակներում քննարկվել է նաև «նախազգուշականության սկզբունքի» դրսևորումը գենետիկորեն ձևափոխված սննդամթերքի առնչությամբ, որի հետ կապված ԵՄ-ի նախազգուշական մոտեցումը հայտվել է իր առևտրային գործընկերների՝ հատկապես ԱՄՆ-ի, ինչպես նաև Առևտրի համաշխարային կազմակերպության (ԱՀԿ), որի անդամ է նաև ԵՄ-ն, հետ տարածայնությունների կիզակետում, որոնք ԵՄ-ի նման զգուշավորությունը որակում են որպես միջազգային ազատ առևտուրն անհիմն խոչընդոտող: Ընդ որում, մինչև 2004թ. ԵՄ-ում արգելք էր դրված գենետիկորեն ձևափոխված սննդամթերքի արտադրության և ԵՄ այն ներմուծելու վրա, որից հետո արգելքը թեև հանվեց, սակայն փոխարենը ներկայումս գործում է գենետիկորեն ձևափոխված սննդամթերքի պարտադիր պիտակավորման պահանջ՝ այն հիմնավորելով տեղեկացված լինելու սպառողի իրավունքով:

Սպառողների կյանքի և առողջության պաշտպանության համատեքստում դիտարկելով ԵՄ-ում ապրանքների տեղաշարժի քաղաքականությունը, ատենախոսության հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ թեև այլ երկրների համեմատությամբ (օրինակ, ԱՄՆ) ԵՄ-ն աչքի է ընկնում առավել զգուշավոր քաղաքականությամբ, սա-

կայն անգամ այս պարագայում, ոչ միշտ է, որ պաշտպանության ցանկալի մակարդակի հարցում ԵՄ և նրա առանձին անդամ պետությունների մոտեցումները համընկնում են: Այդուհանդերձ, անդամագրվելով ԵՄ-ին, պետությունները և նրանց հասարակությունները ինքնակամ զնացել են իրենց ազգային արժեքներից որոշակի զիջումների հանուն ավելի մեծ զաղափարի: Եթե Դատարանը չափից ավելի տուրք տա ազգային սովորույթներին, սննդի բնագավառում առանձին երկրների պահանջումներին, որոնցի, հեղինակի համոզմամբ, զուրկ չեն անդամ պետություններից և ոչ մեկը, ապա կխախտվեն Միության հիմքերը և այն ներդաշնակեցված քաղաքականությունը, որը դրված է վերջինիս հիմքում: Ավելին, բացառված չեն լինի նաև ազգային առանձնահատկությունների, սովորույթների շահարկումները և արդյունքում շուկա մուտքի անհիմն սահմանափակումները՝ ազգային տնտեսական շահերից ելնելով: Իհարկե հիմնախնդրի արմատական լուծումները թաքնված են Միության մակարդակով համընդհանուր կարգավորումների մշակման մեջ, սակայն մինչ այդ դժվարին գործընթացի իրագործումը, պետք է փնտրել լուծման այլ եղանակներ. մասնավորապես՝ խթանել սպառողների իրազեկման քաղաքականությունը և փորձել օժանդակել արտադրանքի տարբեր բաղադրիչների մասին սպառողի ճանաչողությանը, դրանց պոտենցիալ հետևանքների մասին իմացությանը, բարձրացնել սպառողների գիտակցված ընտրություն կատարելու ունակությունը:

Երրորդ գլխում «Ապրանքների ազատ տեղաշարժի և սպառողների պաշտպանության բնագավառում Եվրոպական իրավունքում ձևավորված մոտեցումների կիրառելիությունը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ, ապրանքների ազատ տեղաշարժի և սպառողների պաշտպանության հարաբերակցության հիմնախնդիրները ուսումնասիրվել են ՀՀ համատեքստում որպես միջազգային առևտրին մասնակից պետություն: Փորձ է կատարվել բացահայտել ազատ առևտրի ռեժիմի և այն սպառողների պաշտպանության նպատակներով սահմանափակելու հարցում Եվրոպական իրավունքում ձևավորված մոտեցումների նշանակությունը ՀՀ համար, ինչպես նաև ներկայացնել Եվրոպական իրավունքի ռեցեպցիայի միջոցով սպառողների պաշտպանության բնագավառում ՀՀ իրավական դաշտը զարգացնելու ուղիները:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում «ՀՀ մասնակցությունը միջազգային առևտրին և այդ համատեքստում սպառողների պաշտպանության հիմնահարցը» վերտառությամբ, ուսումնասիրության առարկա են դարձել ապրանքների ազատ տեղաշարժի և սպառողների պաշտպանության հարաբերակցության հարցերը մի շարք միջազգային պայմանագրերով ՀՀ ստանձնած ազատ առևտրի պարտավորությունների համատեքստում:

Առևտրի համաշխարհային կազմակերպությանը ՀՀ անդամակցությունից բխող առևտրի ազատականացման պարտավորություններից բացի, ՀՀ տարածք ապրանքների առանց խոչընդոտների ներմուծումը նախատեսված է նաև ազատ առևտրի խրախուսմանը վերաբերող մի շարք երկկողմ և բազմակողմ պայմանագրերով: ԱՊՀ երկրների միջև Ազատ առևտրի գոտու ստեղծման մասին 1994թ. ապրիլի 15-ի համաձայնագրով նախատեսված ազատ ապրանքների ազատ տեղաշարժի իրավական ամրագրումը, որը սահմանում է, որ «կողմերը չեն կիրառում Պայմանավորվող կողմերից որևէ մեկի մաքսային տարածքից ծագող և մյուս Պայմանավորվող կողմերի մաքսային տարածքների համար նախատեսված ապրանքների ներ-

մուծման և/կամ արտահանման համար *համարժեք գործողություն և քանակական սահմանափակումներ* ունեցող մաքսային տուրքեր, հարկեր և զանձումներ»: Նշված նորմը մեծապես հարում է ԵԸ Պայմանագրի 28 հոդվածում տեղ գտած նորմին: Դա նշանակում է, որ Եվրոպական Ընկերակցությունների դատարանի կողմից հատկապես ապրանքների ներմուծման սահմանափակումների հարցում «համարժեք ազդեցություն ունեցող միջոցներ» հասկացության մեկնաբանության շուրջ ձևավորված նախադեպային իրավունքը, որը վերլուծության առարկա է դարձվել ատենախոսության առաջին գլխում, ուսանելի և օրինակելի նշանակություն կարող է ունենալ նաև ԱՊՀ երկրների միջև ազատ առևտրի հարաբերություններում: Ազատ առևտրի սկզբունքից ԵԸ պայմանագրով թույլատրելի համարվող սահմանափակումները, որոնք պայմանավորված են «մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի և առողջության պաշտպանությամբ», ըստ էության, նույնպես համադրելի են ԱՊՀ Համաձայնագրի մոտեցումների հետ: Ավելին, և՛ Համաձայնագիրը, և՛ ԵԸ պայմանագիրը «սպառողների շահը» չեն դիտարկում, որպես պաշտպանության ենթակա ինքնուրույն օբյեկտ: Սակայն, Ընկերակցությունների դատարանը, դեռևս 1978թ.-ի *Cassis de Dijon*-ի գործով ձևավորած դատական նախադեպի ուժով «սպառողների պաշտպանությունը» ներառել է առևտրի խոչընդոտ հանդիսացող միջոցները արդարացնելու հիմքերի մեջ և հետևաբար Համաձայնագրի հոդված 13-ի դրույթների մեկնաբանումը այնպես, որ դրանք իրենց իմաստով ներառեն նաև սպառողների պաշտպանությունը, այլևս հիմնագուրկ չէ:

Ատենախոսության սույն պարագրաֆի շրջանակներում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում են ԵՄ-ի հետ ՀՀ առևտրային հարաբերությունները, քանի որ Միությունը Հայաստանի առաջին ներմուծող և արտահանող գործընկերն է: 1999թ.-ին Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքի, Աժխի և պողպատի եվրոպական համայնքի, Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի, ինչպես նաև Եվրոպական ընկերակցությունների անդամ պետությունների միջև կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի (ԳՀՀ) 12 հոդվածով նախատեսված ապրանքների ազատ տեղաշարժին վերաբերող նորմի և ԵԸ պայմանագրի համապատասխանաբար 28 և 29 հոդվածների միջև համեմատական անցկացնելով, ատենախոսության հեղինակը փաստում է, որ ազատ առևտրի հիմքերն ամրագրող նշված նորմերը գրեթե նույնանուն են՝ ուշադրության արժանի մեկ կարևոր բացառությամբ: ԳՀՀ նշված հոդվածը Ընկերակցությունում արտադրվող ապրանքների՝ Հայաստան ներկրման պարագայում արգելում է ինչպես քանակական սահմանափակումները, այնպես էլ համարժեք ազդեցության միջոցները, մինչդեռ Հայաստանում արտադրվող ապրանքների ներկրման պարագայում թույլատրելի չեն միայն քանակական սահմանափակումները: Դա նշանակում է, որ Եվրոպական ընկերակցության և դրա անդամ պետությունների կողմից չեն ճանաչվում Ընկերակցությունների դատարանի նախադեպային իրավունքով զարգացված «համարժեք ազդեցության միջոցների» և հատկապես՝ *Cassis de Dijon*-ի գործով արմատավորված «ապրանքների փոխադարձ ճանաչման» սկզբունքի կիրառելիությունը Հայաստանից ներկրվող ապրանքների նկատմամբ: Նման մոտեցումը մեծապես պայմանավորված է հետխորհրդային Հայաստանի անցումային տնտեսությամբ և դրա պայմաններում շուկայի ինքնակարգավորման, այստեղ արտադրվող ապրանքների անվտանգության ու արտադրական գործընթացների հանդեպ պատշաճ հսկողու-

յան և ամենատարբեր ստանդարտների արդիականության նկատմամբ վստահության պակասով: Այս առումով, զգալի առաջընթաց կարող է արձանագրվել ներկայումս ակտիվ քննարկումների գործընթացում է գտնվող ԵՄ «Արևելյան գործընկերության» ծրագրի իրագործման պարագայում, որի առաջնային մասն է կազմում Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ԵՄ-ի հետ համագործակցող երկրների հետ ազատ առևտրի ռեժիմի հաստատումը՝ խորը և համընդգրկուն ազատ առևտրի գոտիների ստեղծման միջոցով: Ընդ որում վերջիններիս շրջանակներում ապրանքների, ծառայությունների և կապիտալի ազատ տեղաշարժը իրականացվելու է Եվրոպական ներքին շուկայում գործող մոտեցումներին առավելագույնս նույնական սկզբունքներով: Այս առումով, ապրանքների ազատ տեղաշարժի բնագավառում Եվրոպական ընկերակցությունում ձևավորվի սկզբունքները, ըստ էության, անմիջական նշանակություն են ձեռք բերում ԳՀ համար ևս՝ որպես «Արևելյան գործընկերության» շրջանակներում ԵՄ-ի հետ ազատ առևտրի ռեժիմի հաստատմանը հավակնող պետություն:

Եվրոպական Ընկերակցությունների դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի և ընդհանրապես Եվրոպական միության մոտեցումների ուսումնասիրության արժեքավորությունը փաստող մեկ այլ հանգամանք է այն, որ արժեքները, որոնց պաշտպանության նկատառումներով Մաքսային օրենսգիրքը հնարավոր է համարել ԳՀ տարածքով ապրանքների ազատ տեղաշարժի արգելումը, ըստ էության, նույնական են ԳՀ միջազգային պայմանագրերով, ինչպես նաև ԵԸ պայմանագրով որդեգրած մոտեցումներին: Ընդ որում Մաքսային օրենսգրքում տեղ գտած ձևակերպումը ոչ միայն ուղղակիորեն չի մատնանշում սպառողների շահը՝ որպես ապրանքների ներմուծման սահմանափակումների կիրառման հիմք, այլև բավական հեղինակ ունի: Հաշվի առնելով այն կոնֆլիկտային իրավիճակները, որոնց Եվրոպական միությունը ստիպված է եղել բախվել նույնական կարգավորման պարագայում, կարող ենք պնդել, որ գործնականում բացառված չէ 19 հոդվածում մատնանշված գերակա արժեքների պաշտպանության պատրվակի տակ կամ դրանց անհիմն վկայակոչմամբ՝ նաև ԳՀ շուկա ապրանքների մուտքի անհարկի խոչընդոտների ստեղծումը, որի պարագայում Եվրոպական Ընկերակցությունների դատարանի զարգացրած սկզբունքները նշանակալի բազա են հանդիսանում ապրանքի ազատ տեղաշարժի սահմանափակումների իրավաչափությունը գնահատելու համար:

ԳՀ-ում բացակայում են նաև ԵՄ իրավունքում ձևավորված «նախազգուշակա-նության սկզբունքի» կիրառման հիմքերն ու չափանիշներն ամրագրող հստակ օրենսդրական կարգավորումները: Այս տեսանկյունից, Եվրոպական համապատասխան փորձը ևս օգտակար օրինակ է ԳՀ առևտրային և սպառողական քաղաքականության համար:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում «Եվրոպական իրավունքի ազդեցությունը սպառողների պաշտպանության բնագավառում ԳՀ օրենսդրական դաշտի վրա» վերտառությամբ, սպառողներին առնչվող ԳՀ օրենսդրական դաշտի վերլուծության հիման վրա, գալիս ենք եզրահանգման, որ այն չի առանձնանում սպառողներին առնչվող հարաբերությունների ամենատարբեր ոլորտները կարգավորող իրավական ակտերի բազմազանությամբ: Սպառողների պաշտպանության ոլորտում ԳՀ օրենսդրական դաշտի ձևավորման ու զարգացման վրա զգալի ազդեցություն ունի Հայաստանի անդամակցությունը Եվրոպայի խորհրդին (ԵԽ), ինչպես նաև համա-

գործակցությունը ԵՄ-ի հետ: Ընդ որում ԵՄ-ի հետ Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը օրենսդրական մոտարկման ենթակա ոլորտների շարքում ոչ միայն մատնանշում է սպառողների պաշտպանությունը (հոդված 43), այլև նախատեսում է սպառողների պաշտպանությանը վերաբերող առանձին հոդված, որում մասնավորապես սահմանում է, որ կողմերը սերտորեն կհամագործակցեն իրենց սպառողների պաշտպանության համակարգերի համատեղելիությանը հասնելու նպատակով (հոդված 64):

ԵՄ իրավունքը առաջարկում է սպառողների պաշտպանության ավելի բարձր մակարդակ, քան նախատեսված է ԳՀ օրենսդրությամբ, փաստ, որը արձանագրված է անգամ ԳՀ-ի իրականացման ԳՀ ազգային ծրագրում: Այս առումով, ողջունելի է սպառողների պաշտպանության բնագավառում ԳՀ-ի Համաձայնագրի իրականացման 2006-2009 ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների և օրենսդրական բարեփոխումների հավակնորդ շարքը, որոնց իրագործման պարագայում ԳՀ օրենսդրությունը որոշակի առումով կմոտենա այս ոլորտում Եվրոպական միության օրենսդրական հարուստ բազային: ԳՀ-ի Համաձայնագրի իրականացման 2006-2009 թվականների ազգային ծրագիրը՝ ըստ ոլորտների և յուրաքանչյուր միջոցառման իրականացման կոնկրետ ժամանակացույցի սահմանմամբ, նախատեսում է ԵՄ համապատասխան իրավական ակտերին ԳՀ օրենսդրության մոտարկման ուղղությունները: ԳՀ օրենսդրության մոտարկումը ընդգրկում է սպառողների պաշտպանության տեսանկյունից արդիական, սակայն առ այսօր դեռևս չկարգավորված կամ թերի կարգավորված այնպիսի հարցեր, ինչպիսիք են գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներ շրջակա միջավայր ինքնակամ բացթողման, առևտրային կետերից դուրս կնքված պայմանագրերի, սպառողական պայմանագրերում անբարեխիղճ պայմանների, հեռակա կարգով կնքվող պայմանագրերի իրավական կարգավորումը: Ավելին, ԳՀ օրենսդրության մեջ բացակայում են սննդամթերքում օգտագործվող որոշ հավելումներին, սննդամթերքի պիտակավորմանը, ներկայացմանը և գովազդին, իոնացնող ճառագայթման միջոցով մթերքի և սննդամթերքի մշակմանը, և այլ ոլորտներին վերաբերող չափանիշները, արագ սառեցված սննդամթերքների պատրաստման մեջ օգտագործվող հումքի և պատրաստման, տեղափոխման, պահեստավորման և պահպանման համար օգտագործվող սարքավորումների նկատմամբ սանիտարական պահանջները: Իսկ, ապրանքների մակնշմանը վերաբերող ԳՀ Կառավարության ակտերը չեն ընդգրկում սպառողական ապրանքների ողջ սպեկտրը և արդյունքում, որոշ ապրանքատեսակներ դեռևս դուրս են մնում մակնշման բովանդակության և ձևի վերաբերյալ պարտադիր կարգավորումների շրջանակից:

Մինչդեռ, ԵՄ իրավունքին ներդաշնակ օրենսդրության առկայության անհրաժեշտությունը բխում է ոչ միայն սպառողների պաշտպանության, այլ նաև ԳՀ արտաքին առևտրի խրախուսման նկատառումներից: ԵՄ անվտանգության պահանջներին չհամապատասխանող սննդամթերքը և այլ սպառողական ապրանքները հազիվ թե կարողանան մուտք գործել ԵՄ շուկա: Մյուս կողմից էլ, ԵՄ հսկայական շուկայում գործելու շահագրգռվածությունը դրդում է հայրենական արտադրողներին առաջնորդվել Եվրոպական խիստ և մանրակրկիտ ստանդարտներով՝ դրանով իսկ անուղղակիորեն նպաստելով նաև ԳՀ-ում սպառողների անվտանգության մակարդակի և երաշխիքների որոշակի առումով բարձրացմանը:

Երրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Շրջահայաց սպառողի» Եվրոպական հայեցակարգի 33-ում կիրառման հիմնախնդիրները», փորձ է կատարվում բացահայտել հայ սպառողի վարքագիծը և նրա կողմից ապրանքների ընտրության իրականացման առանձնահատկությունները՝ վեր հանելով սպառողների պաշտպանության բնագավառում արդյունավետ պետական քաղաքականության իրականացման համար ուշադրության արժանի հիմնախնդիրները: 33-ում «ինքնավար, շրջահայաց, տեղեկացված սպառողի» Եվրոպական հայեցակարգի գործառնության և սպառողների պաշտպանության հիմնախնդիրների շուրջ դատողություններն ու եզրահանգումներն առավել առարկայական դարձնելու համար ատենախոսության հեղինակը իրականացրել է սոցիոլոգիական հարցում Երևան քաղաքում: Հարցման արդյունքները ցույց են տվել, որ ռեսպոնդենտ սպառողների զգալի հատված՝ 49%-ը, իրենց ամենօրյա ընտրությունն իրականացնելիս ուշադրություն չի դարձնում ապրանքի քաղադրության, դրանում պարունակվող նյութերի էության և պոտենցիալ վնասակար հետևանքների ուսումնասիրությանը: Նշվածին գումարվում է նաև սպառողների անտեղյակությունը ապրանքում պարունակվող նյութերի էությանը և դրանց վնասակար ազդեցությանը, ինչն էլ մեծապես պայմանավորում է ապրանքի ընտրության ժամանակ դրանց վրա հատուկ ուշադրություն չդարձնելու հանգամանքը: «Շրջահայաց սպառողի» եվրոպական հայեցակարգի գործառնության պայմաններում սպառողների պաշտպանության բնագավառում 33 քաղաքականությունը զգալի շեշտադրում պետք է կատարի սպառողներին ապրանքի վերաբերյալ պատշաճ տեղեկատվություն տրամադրելու և նրանց կողմից ապրանքների ընտրությանը առավել խորագիմն մոտենալու մշակույթը տարածելու խնդրին:

Եվրոպական միության, այնպես էլ բազմաթիվ երկրների հետ Հայաստանի Հանրապետության սերտ առևտրային հարաբերությունները, և դրանց հիմքում ընկած պայմանագրերում ապրանքների ազատ տեղաշարժի պայմանավորումը գրեթե նույն սկզբունքներով, ինչ և նախատեսված է ԵԸ պայմանագրում, Հայաստանի Հանրապետության համար ևս առավել քան արդիական են դարձնում «տեղեկացված» սպառողի Եվրոպական հայեցակարգի կենսագործումն ու դրա վերաբերյալ հանրության իրազեկության բարձրացումը:

Այսպիսով, դասեր քաղելով սպառողների պաշտպանության սահմանների և մոտեցումների հարցում Եվրոպական քաղաքականության մոտեցումներից, առաջարկվում է սպառողների պաշտպանության բնագավառում 33 քաղաքականության մեջ առանձնացնել հետևյալ երեք ուղղությունները.

- սպառողի տեղեկատվության իրավունքի երաշխավորում և նրա կրթության ու իրազեկման խրախուսում՝ այնպես, որ զարգացվեն ապրանքների ազատ շուկայում լիարժեք ու ակտիվ դրսևորվելու, առավել մեծ օգուտներ ստանալու սպառողի ունակությունները.
- ազատ շուկային պետական միջամտության սահմանների հստակեցում՝ թույլատրելով միայն «սահմանափակ» պետական միջամտություն և ապրանքների ազատ տեղաշարժի սահմանափակում, երբ դա արդարացված է սպառողների գերակա շահերով:
- լիարժեք մրցակցային քաղաքականության ապահովում՝ շուկայում երաշխավորելով ապրանքների լայն այլընտրանքի առկայություն:

1. Եվրոպական ընկերակցության հիմնադիր պայմանագրում տեղ գտած նպատակները, ազատ առևտրի ռեժիմի հռչակումը և անդամ երկրների ապրանքների փոխադարձ ճանաչման սկզբունքը վկայում են այն մասին, որ ԸՆկերակցությունը մեծ շեշտ է դնում ազատ առևտրի վրա: Նույնիսկ որոշակի օրինական շահերի, այդ թվում՝ սպառողների շահերի, պաշտպանության համար ապրանքների ազատ տեղաշարժը սահմանափակելու թույլատրելիությունը ամենևին էլ չի նշանակում ԵԸ անդամ պետությունների կողմից միջոցների ընտրության հարցում բացարձակ ազատություն: Պետությունը պարտավոր է ընտրել հնարավոր այն միջոցը, որն առավել նվազ ազդեցությունն ունի ազատ առևտուրը խոչընդոտելու առումով: ԸՆկերակցությունների դատարանի նախադեպային իրավունքով ամրապնդված այս մոտեցումը կարմիր թելի պես անցնում է առևտրի սահմանափակմանն առնչվող ցանկացած հարցի քննության ժամանակ:

2. Ապրանքների ազատ տեղաշարժի բնագավառում ԵԸ-ում ձևավորված սկզբունքները երկակի ազդեցություն ունեն սպառողների պաշտպանության վրա: Մի կողմից դրանց հիմքի վրա սպառողների պաշտպանությունը դարձել է ԸՆկերակցության իրավասության առարկա, մյուս կողմից՝ դրանք ստիպել են անդամ-պետություններին որոշակիորեն նահանջել սպառողների պաշտպանության բնագավառում խիստ ազգային ստանդարտներից՝ հանում ԸՆկերակցության ընդհանուր շուկայի կայացման և դրանում սպառողին ընձեռնող հնարավորությունների:

3. Սպառողների պաշտպանության բնագավառում ԵԸ քաղաքականությունը պատմականորեն զարգացել է ներքին շուկայի կայացման համատեքստում և երկար ժամանակ չի դիտարկվել որպես ԸՆկերակցության քաղաքականության առանձին ուղղություն: Ներկայումս ևս սպառողների պաշտպանության բնագավառում ԸՆկերակցության քաղաքականությունը լիովին անկախ չէ ներքին շուկայի քաղաքականությունից և սպառողների պաշտպանության բնագավառում Միության անդամ-պետությունների օրենսդրությունների ներդաշնակեցման գործընթացները իրենց հիմնավորումն են ստանում ներքին շուկայի նպատակների վկայակոչմամբ: Սակայն, վերջին շրջանում հատկապես Լիսաբոնի պայմանագրի փոփոխություններով, սպառողների պաշտպանության բնագավառում ԵՄ քաղաքականությունը աստիճանաբար արդեն ձեռք է բերում հարաբերական ինքնուրույնություն՝ դիտարկվելով որպես ներքին շուկայի իրավասությունից անջատ առանձին իրավասություն:

4. Եթե ի սկզբանե ԸՆկերակցության սպառողական իրավունքի համար առաջնային են հանդիսացել ներպետական կարգավորումները, ապա ներկայումս ԸՆկերակցության իրավունքը միտում ունի դառնալու սպառողների պաշտպանության հարցում համակողմանի քաղաքականության իրականացման առանցքային գործիքը: Միասնական կարգավորմանը աստիճանական անցումը հնարավոր է դարձել «նվազագույն ներդաշնակեցման» բանաձևի միջոցով, որը մի կողմից ապահովում է մասնակի նեգատիվ ինտեգրացիա և ազատ առևտուրը խոչընդոտող ազգային կարգավորումների վերացում, մյուս կողմից՝ անդամ երկրների մոտ պահպանվում է առավել բարձր ստանդարտներ ունենալու իրավունքը, եթե դրանք չեն հակասում ԸՆկերակցության մակարդակով սահմանված նվազագույն չափանիշներին:

5. Ներքին շուկայի զարգացմանը զուգընթաց տեղի է ունենում նաև սպառողների քաղաքականության և ներքին շուկայի քաղաքականության միջև հարաբերակցության փոփոխություն: Ընկերակցության քաղաքականությունը սպառողին դիտարկում է որպես շուկայական ինտեգրացիա առավելություններից և առևտրի խոչընդոտների վերացումից «ակտիվ» օգտվող: Առաջնորդվելով այս գաղափարախոսությամբ, Ընկերակցությունների դատարանը սպառողների պաշտպանության սահմանների ուրվագծման հարցում զարգացրել է «ինքնավար և տեղեկացված» սպառողի հայեցակարգը՝ սպառողին դիտարկելով որպես ողջամիտ «homo economicus», որը քննադատաբար է ընկալում ապրանքի վերաբերյալ իրեն տրամադրվող տեղեկատվությունը, մանրագին գնահատում ու վերլուծում է դրա բովանդակությունն ու նշանակությունը, և այս ամենի հիման վրա, կայացնում է իր ռացիոնալ որոշումը: Ընդ որում, Դատարանը անթույլատրելի է համարում սպառողի գերպաշտպանությունը, քանի որը դրանով վտանգվում է նրա ինքնավարությունը, ինչը համարվում է ժամանակակից շուկայական տնտեսության հիմնասյուներից:

6. «Շրջահայաց, ինքնավար և տեղեկացված սպառողի» կողմից շուկայում ապրանքների ազատ հոսքի պայմաններում իր համար լավագույն ընտրություն կատարելու համար անհրաժեշտ են մասնավորապես հետևյալ նախապայմանները. 1) շուկայում այլընտրանքների առկայություն, 2) սպառողներին տեղեկատվության տրամադրում և 3) շուկայի այլընտրանքների մեջ կողմնորոշվելու և ազատ ընտրություն կատարելու ունակությունների զարգացում:

7. Սպառողին տեղեկատվության տրամադրումը չպետք է սահմանափակվի միայն ապրանքի պիտակներով, ինչը հարցի միայն ֆորմալ կողմն է: Գործնականում սպառողները ժամանակ չունեն հավաքելու, վերլուծելու և ստուգելու տրամադրվող տեղեկատվությունը, կամ հանդիպում են տրամադրվող տեղեկատվությունը վերլուծելու դժվարությունների, իսկ առանձին դեպքերում էլ ռիսկերի նկատմամբ մեծապես լավատես են կամ դրանք համարժեք գնահատելուն անընդունակ: Խնդիրը տեղեկատվությունը սպառողի համար ընկալելի և ըմբռնելի դարձնելն է, որի նպատակով այն պետք է զուգակցել նաև հատուկ պետական քարոզարշավի, հայտարարությունների, ուսուցողական ծրագրերի, հեռուստատեսային շոուների, թուղիկների տարածմամբ և հասարակական հետաքրքրությունը խթանող այլ տարածված միջոցներով:

8. Սպառողների պաշտպանությանն ուղղված օրենսդրությունը խնդիր ունի խթանելու և պաշտպանելու մրցակցային շուկայում տեղեկացված ընտրություն կատարելու սպառողի հնարավորությունը, բայց դրա ամփոփական խնդիրը չէ երաշխավորելը, որ սպառողները գործեն բացարձակ ռացիոնալությամբ: Պետության կողմից մրցակցային շուկային «սահմանափակ» պատերճալիստական միջամտությունը թույլատրելի է միայն բացառիկ դեպքերում, երբ սպառողին տեղեկատվության տրամադրումը ի գործ է հավասարակշռելու սպառողի սպասումներն ու ճիշտ ընտրությունը, և երբ սխալական ընտրությունը պարունակում է սպառողի առողջության, կյանքի կամ անվտանգության համար վնասակար հետևանքների ռիսկ:

9. ՀՀ մի շարք միջազգային պայմանագրեր, ինչպես նաև Մաքսային օրենսգիրքը նախատեսում են ապրանքների ազատ տեղաշարժի և դրա թույլատրելի սահմանափակումների վերաբերյալ ե՛լ պայմանագրի հողվածներ 28-ին և 30-ին գրեթե նույնական նորմեր՝ մի բացառությամբ: ԵՄ-Հայաստան Գործընկերության և համագոր-

ծակցության համաձայնագրով Ընկերակցությունում արտադրվող ապրանքների Հայաստան ներկրման պարագայում արգելված են և՛ քանակական սահմանափակումները, և՛ համարժեք ազդեցության միջոցները, մինչդեռ Հայաստանից Ընկերակցություն ապրանքների մուտքի պարագայում՝ միայն քանակական սահմանափակումները: Այս, ինչպես նաև «Արևելյան գործընկերության» ԵՄ նոր ծրագրի համատեքստում, որի առանցքը ԵՄ ներքին շուկայի ռեժիմին համահունչ ազատ առևտրի ռեժիմի հաստատումն է Եվրոպական հարևանության քաղաքականության երկրների հետ, ապրանքների ազատ տեղաշարժի սկզբունքների և սպառողների շահերի հավասարակշռման վերաբերյալ Ընկերակցությունների դատարանի մեկնաբանությունները արժեքավոր նշանակություն են ձեռք բերում:

10. «Շրջահայաց սպառողի» եվրոպական հայեցակարգի գործառնության պայմաններում սպառողների պաշտպանության բնագավառում ՀՀ քաղաքականությունը զգալի շեշտադրում պետք է կատարի սպառողներին ապրանքի վերաբերյալ պատշաճ տեղեկատվություն տրամադրելու և նրանց կողմից ապրանքների ընտրությանը առավել խորագին մոտենալու մշակույթը տարածելու խնդիրն:

11. Սպառողների պաշտպանության բնագավառում ՀՀ օրենսդրական դաշտը բավական սահմանափակ է՝ ի տարբերություն ԵՄ-ի, որի շրջանակներում ընդունվել են բազմաթիվ դիրեկտիվներ, որոնք կարգավորում են սպառողների շահերի տեսանկյունից առավել խոցելի հարաբերությունները: Այս առումով, կարևոր է նաև սպառողների պաշտպանությանն առնչվող ՀՀ օրենսդրական դաշտի կատարելագործումը և հարստացումը՝ եվրոպական օրենսդրության ռեցեպիայի և դրան ՀՀ օրենսդրության մոտարկման միջոցով:

Առենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. «ԵՄ տարածքում ապրանքների ազատ տեղաշարժի սկզբունքի կիրառման առանձնահատկությունները», Իրավագիտության հարցեր, No.1-2, Երևան, 2008թ., էջեր 75-87,

2. «Քաջատեղյակ սպառողի» հայեցակարգի ձևավորումը ԵՄ-ում (անգլերեն լեզվով), Իրավագիտության հարցեր, No.3-4, Երևան, 2008թ., էջեր 81-91,

3. Սպառողների առողջության պաշտպանությունը ԵՄ-ում ապրանքների ազատ տեղաշարժի համատեքստում, Պետություն և իրավունք, No.1-2, Երևան (43-44), 2009 թ., էջեր 25-35:

135 28 711